



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

283

R-90

1905




№ 4

ՉԵՍՍ ԲՐԱՅՍ

ԿՐՕՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ



Արտատպած Արարատ ամսագրից

Բաղուածք

ԵՂԻՇԷ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905

283
~~F-90~~

8 MAR 2013
4 NOV 2000

280
742-PP

№ 4
ՁԵՄՍ ԲՐԱՅՍ

283
P-90

126 *պ.*

ԿՐՈՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ



Արևասպամ Աւարուս աւխագրից

16661
1905

ԵՂԻՃԷ Զ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՒՐԱԿԵԱՆ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905

9789

18899 0089

Дозволено цензурою 24 Февраля 1905 г. г. Тифлисе

ԿՐՕՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

(Չէմս Բրայս).

I

ԱՄԵՐԻԿԱՅԻՈՅ ՄՏՔԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՆՐԱՆՑ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ.

Ամերիկացիք շատ կրօնատէր են: Նորա ոչ միայն յարգում են կրօնը և նրա պաշտօնեաներին, ոչ միայն ճշտապահութեամբ եկեղեցի են յաճախում և կատարում կիրակնօրեայ դաստիարակների պահանջները, այլ և բացի դրանից բարեկիրթ կերպով մասնակցում են իրենց դաւանած կրօնի ծէսերին. — նրանք բարեպաշտ են առանց փարիսեցիութեան: Նրանց՝ դաւանաբանական մասի տուած կարևորութիւնը երբէք չի խանդարում ճանաչելու իրենց աստուածաբանութեան բարոյական կողմը: Ամերիկայում քրիստոնէական վարդապետութիւնը բարբերի վրայ ազդեցութիւն ունի ի հարկէ եթէ ոչ այնչափ ուժեղ, որչափ այդ պահանջում է նրա տեսական մասը, բայց ըստ երևոյթին աւելի զօրեղ, քան ուրիշ որ և է պետութեան մէջ, և աւելի ուժեղ, քան ինչ որ ունէր՝ այսպէս կոչուած՝ հաստատուն հաւատոյ դարերում: Ամերիկացիք իրենց կենցաղավարութեան մէջ հետևում են բարոյական լաւ կանոններին: Բացառութիւն է կազմում խաժամուժը, որն արևմուտքում հմուքեր մշակելով է պարապում և որի թիւը այնքան մեծ չէ երբէք, ինչպէս այդ կարծում են եւրոպացիք, որոնք ամերիկական միայն վէպերն են կարգացել: Բացի

մի քանի մեծ քաղաքների տակաճիւղից և հարաւում ապրող նեգրներէրից, կարելի է ասել, որ ժուժկալութեան, օղջախոհութեան, ճշմարտասիրութեան և ազնուութեան մակերևոյթը մի փոքր աւելի բարձր է—քան եւրոպական մեծ տէրութիւնների մէջ: Իրենց բնածին բնազդներով թէ կարուածատէր երկրագործները և թէ արհեստաւորները բարեսիրտ են և մարդասէր: Նրանք յարգում են օրէնքը, քաղաքավարի և զիջող են կանանց և երեխաներին և չափազանց մեծ նշանակութիւն են տալիս ընտանեկան պարտաւորութիւնների անթերի կատարման:

Ամերիկացւոց բարոյական և կրօնական հակումները բաւարարութիւն չեն գտնում իրենց մէջ: Այդ ժողովուրդը շատ ուժեղ մի ցանկութիւն էունի արմատախիւղ անելու կամ ուղղելու այն բոլորը, ինչ որ վատ է աշխարհիս երեսին: Ոչ մի տեղ այնքան մարդասիրական և ուղղիչ հիմնարկութիւններ չկան, ինչքան Ամերիկայում: Ամերիկացիք նոյն իսկ խոհեմութեան և հնարաւորութեան սահմանից դուրս են գալիս արատներն արմատախիւղ անելու ջանքերի մէջ, մարդկանց պաշտպանելու բոլջախոհութիւնից և մարբելու ժողովրդական գրականութիւնը:

II

ԿՐՕՆԸ ՀՍՄԱՆՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

Ամերիկական համալսարաններից և փոքր կոլէժներից շատերը պատկանում են denominational (որ և է կազմակերպութեան իրաւասութեան ներքոյ եղող) կոչուածների շարքին: Սակայն այդ բառն ամերիկայում այն նշանակութիւնը չունի, որը նրան տալիս են եւրոպայում, կամ նոյն իսկ Անգլիայում: Ամերիկայում այդ նշանակում է, որ դպրոցն հիմնուել է քրիստոնէական որ և է եկեղեցու նախաձեռնութեամբ և որոշ կապ է պահպանում, կամ

ենթակայ է այդ եկեղեցու ազդեցութեանը: Բայց այդ տեսակ դպրոցներում (բացի կաթոլիկականներից) շատ հազուադիւր է, որ մերժեն այլադաւան դասատուներին, իսկ ուրիշ դաւանութեան պատկանող ուսանողներին երբէք չեն մերժում: Այդ ուսումնարաններում երբէք դաստիարակութեանը ազանդաւորական կերպարանք տալու ձգտումն տեղի չի ունենում.—(ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ կանոնից ազատ են աստուածաբանական բաժիններն, եթէ միայն նրանք գոյութիւն ունեն այդ հաստատութիւնների մէջ): Թէև սովորաբար պատահում է, որ այն եկեղեցուն հետևող ուսանողներն, որին պատկանում է հիմնարկութիւնը, առաւել բազմաթիւ են լինում քան միւս եկեղեցիներին հետևողները, բայց և այնպէս այլադաւան ուսանողները մեծ թուով են կրթութում այնտեղ և ազատ են նրանց դաւանափոխ դարձնելու ջանքերի վտանգից: Հարվարդի համալսարանը ց'այսօր պահպանում է ունիթուականութեան թեթև հետքը, իսկ նրա աստուածաբանական լսարանում կայ մէկ թէ երկու հոգի ունիթու հոգևորականներից: Փէլի համալսարանը միշտ կողմնակից է եղել կոնգրէգացիօնալիստներին: Նրա կանոնադրութիւնը պատուիրում է, որ նրա լիազօրների թւում լինին 10 հոգի կոնգրէգացիօնալիստներ: Նրա նախագահը միշտ եղել է կաթոլիկ միաբանական հոգևորականներից, մինչդեռ Բրուսնի համալսարանի նախագահ միշտ նշանակուել է բապտիստներից (փոքրահասակների մկրտութիւնը մերժողներից): Պրինստօնի համալսարանը աւելի Պրեսվիտերեանների (միայն քահանայութիւն ընդունողների) կերպարանք է կրում, իսկ եպիսկոպոսական եկեղեցուն հետևողներն էլ ունին մի քանի կոլէժներ, որոնց մէջ տեղական եպիսկոպոսը պատկանում է որոշ լիազօրութիւն ունեցողների թուին: Սակայն ներկայումս ոչ Հարվարդի, ոչ Փէլի, ոչ Բրուսնի և ոչ էլ Պրինստօնի համալսարանները դասատուներ ընտրելիս երբէք առաւելութիւն չեն տալիս այս կամ այն դաւանութեան, նրանք

ընդունում են քրիստոնէական բոլոր եկեղեցիներին պատկանող ուսանողներին և նոյն իսկ նրանց, որոնք ոչ մի դաւանութեան չեն պատկանում:

Բոլոր հին համալսարաններում և նորերից էլ շատ շատերում կան աղօթատներ, որտեղ կանոնաւոր կերպով կատարւում են ժամասացութիւններ, ամենօրեայ համառօտ աղօթքներ, իսկ կիրակէ օրերը եկեղեցական պաշտամունք է կատարւում երկու անգամ: Գլխաւորներից մեծագոյն մասում իւրաքանչիւր ուսանողը պարտաւոր է ժամասացութեան ներկայ լինել, եթէ միայն այդ բանին արգելք չի հանդիսանում նրա կրօնական համոզմունքը: Աստուածապաշտութիւնն երբէք աղանդաւորական բնակութիւն չի կրում և երբեմն էլ հերթով կատարւում է զանազան դաւանութիւններին պատկանող հոգևորականների ձեռքով: Միացեալ Նահանգների նոյն իսկ նոր համալսարանների միջին, որոնք առանձին բացառիկ դաւանութեան չեն պատկանում, կան այնպիսիք, որոնք Միջին դանի համալսարանի նման ուսանողներին ամենօրեայ աղօթքի են հրաւիրում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կան բազմաթիւ ամերիկացիք, որոնք համոզուած են, որ որ և է դաւանութեան չը պատկանող գալորցական հաստատութիւնը չի կարող քրիստոնէական իսկական գալորց լինել, իսկ Կորնելի համալսարանը իրեն գոյութեան սկզբներին հէնց այդ տեսակէտից ենթարկւում էր զանազան յարձակումների: Կորնելի համալսարանում այժմ կայ եկեղեցական կիրակնօրեայ քարոզչի պաշտօն, որի համար յատուկ դրամագլուխ կայ 30,000 դոլլարի (60,000 ռ.) այդ դրամագլխից վարձատրութիւն է տրւում զանազան դաւանութեան այն հոգևորականներին, որոնք հերթով քարոզ են խօսում ճեմարանական տարուայ քսան և մէկ կիրակէ օրերը: Այդ դրամագլուխ կտակող անձը եպիսկոպոսական եկեղեցու հետևող էր: Նա ցանկութիւն յայտնեց, որ քարոզիչներն իրեն հաւատակից լինեն, սակայն լիազօրներն յայտնեցին, որ այդպիսի պայմաններով

այդ նուիրաբերութիւնը չեն ընդունիլ: Քարոզներին չեն յաճախում մի միայն կաթօլիկ ուսանողներ:

III

ԵԿԵՂԵՑՒՆԵՐՆ ՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Քննելով առանձին նահանգների և ազգային կառավարութեան կազմակերպութիւնը, մենք ոչ մի անգամ առիթ չունեցանք յիշելու որ և է եկեղեցական հիմնարկութեան մասին, որովհետև կառավարութիւնը Միացեալ Նահանգներում այդ տեսակ խնդիրների կամ հիմնարկութեանց հետ ոչ մի գործ չունի: Հին և նոր աշխարհի մէջ եղած տարբերութիւններից դա համարեա ամենանշանաւորն է: Աստուածաբանական վէճերից, եկեղեցու և պետութեան մրցումից էր առաջ գալիս այն պատերազմների և ներքին խռովութիւնների կէսը, որոնցով տանջւում էին եւրոպական տէրութիւնները՝ սկսած միաբնակների վէճից, որ տեղի ունեցաւ Հռովմի կայսրութեան մէջ հինգերորդ դարում, մինչև 19-րդ դարու քաղաքակրթական պատերազմը գերմանիայում: Վէճերի այդ ընդարձակ շրջանը, ինչպէս և ամեն տեսակ ընդհարումների ասպարէզը, Միացեալ Նահանգների կառավարութեան համար միշտ փակ է եղել: Այստեղ պետական տիրող եկեղեցի չկայ. կրօնական բոլոր խմբակցութիւնները միակերպ հաւասար են օրէնքի առաջ, նրանք յայտնի գոյութեան իրաւունք են ստանում որպէս մասնաւոր մարդկանց կամաւոր համախմբումներ:

Միացեալ Նահանգների սահմանադրութիւնը բովանդակում է իրեն մէջ հետևեալ արգելումներ.

Յօդ. VI. Միացեալ Նահանգներում որ և է պաշտօն ստանձնելու կամ հասարակական որ և է պարտականութիւն կատարելու համար իբրև անհրաժեշտ պայման չը

պէտք է պահանջել, որ այս կամ այն դաւանութեան պատկանեն:

Յաւելուած. Վեհաժողովը չը պէտք է հրատարակի օրէնքներ որ և է կրօն մտցնելու կամ արգելքներ այս կամ այն կրօնն ազատ դաւանելու մասին:

Երբէք ոչ մի փորձ տեղի չի ունեցել փոփոխելու կամ խանգարելու այդ որոշումները: Նրանք վերաբերում են մի միայն ազգային ընդհանուր կառավարութեան և ոչ մի բանով չեն սահմանափակում այն նահանգների կառավարութիւնները, որոնց՝ ինչ վերաբերում է կրօնին, կատարեալ ազատութիւն է տուած, պահպանելով մի միայն որոշ ապահովութիւն հալածանք յարուցանելու խնդրում:

Իւրաքանչիւր նահանգի սահմանադրութեան մէջ կան վերև առաջ բերածների նման որոշումներ: Սահմանադրութիւնների մեծագոյն մասում յայտարարած է, որ իւրաքանչիւրը կարող է երկրպագել Աստուծոն իւր սեփական խղճի թելադրութեան համեմատ, կամ կրօնական զգացմունքներ արտայայտելու բոլոր ձևերը և Աստուածաշտութեան եղանակները պէտք է սուրբ համարուին¹⁾:

Նահանգների մեծագոյն մասում նոյնպէս որոշուած է, որ ոչ ոքի չի կարելի հարկադրել այս կամ այն եկեղեցի յաճախելու. մի քանի նահանգներում արգելուած է տիրող եկեղեցի ունենալ և շատ նահանգներում նախապատուութիւն ընծայել որ և է կրօնական ազանդի: Միաժամանակ շատ նահանգներում արգելուած է նահանգի կամ քաղաքի գանձարանից դրամական նպաստ տալ որ

1) Չորս նահանգներում որոշուած է, որ հասարակաց հանգըստութիւնը խանգարելու դէպքում չի կարելի այդ յօդուածի վրայ մասնանիչ լինել. մի քանի նահանգներում որոշուած է, չի կարելի յենուիլ այդ յօդուածի վրայ զանազան անկարգութիւնների դէպքերում կամ այնպիսի ձէսեր կատարելու, որոնցով խանգարուած է ներքին հանգիտան ու ապահովութիւնը: Նահանգներից երեքում որոշուած է, որ ոչ ոք իրաւունք չունի խանգարելու, որ ուրիշները կատարեն իրենց կրօնական ձէսերը:

և է եկեղեցու, ազանդաւորական հիմնարկութեան կամ այն դպրոցներին, որոնք գտնուում են որ և է կրօնական խմբակցութեան իրաւասութեան ներքոյ: Քսան և մէկ սահմանադրութիւններն արգելում են պահանջել այս կամ այն եկեղեցուն պատկանիլը՝ որպէս անհրաժեշտ պայման այս կամ այն պաշտօն ստանալու: Մի քանիսում յայտարարուած է, որ այդ հիմնական կանոնը կարևոր է նաև քաղաքացիական իրաւունքներով օգտուելու համար, կամ կրօնական հաւատալիքները չեն կարող արգելք լինել վկայութիւն տալու գործում: Բայց և այնպէս մի քանի նահանգներում դեռ գոյութիւն ունին ուշադրութեան արժանի քանի մի սահմանափակումներ կրօնական հաւատալիքների մասին: Վերմոնտում և Ռէլաւարում իւրաքանչիւր ազանդ պարտաւոր է կրօնական այս կամ այն կուլտի հետևել. իսկ Վերմոնտում՝ բացի դրանից որոշուած է, որ իւրաքանչիւր ազանդ պարտաւոր է պահել կիրակնօրեայ հանգիստը: Հարաւային Յ նահանգներում թոյլ չի տրուում, որ Գերագոյն Արարչի գոյութիւն չընդունողները պաշտօններ գրուեն: Բացի այդ Յ նահանգներից՝ Պէնսիլվանիայում և Տենեսսում արգելուած է որ և է պաշտօնի համար ընտրել նրանց, որոնք չեն հաւատում Աստուծուն և հանդերձեալ կեանքում ստանալիք պատժի կամ վարձատրութեան: Մարիլանդում և Արկանզասում այդպիսի անձինք չեն կարող նոյն իսկ երգուեալ դատաւոր լինել և դատավարութեան ժամանակ իրաւունք չունին վկայութիւն տալու: Կրօնական ազատութիւն ասելով Միացեալ Նահանգներում առհասարակ հասկանում են քրիստոնէական զանազան դաւանութիւնների և նոյն իսկ

1) Նեաղայում մօտերումս քաղաքացիական իրաւունքներից զրկեցին այն մորմոններին, որոնք ապրում են այդ նահանգում՝ բաց մորմոններն այնչափ իրենց հաւատալիքների համար չեն հալածուած, որքան իրենց հասարակական կազմակերպութեան և իրենց հոգևորականներն աստիճանաւորութեան համար (ЧИНОВАЛІЕ).

Աստուածեանները զանազան շարքերի (խմբեր) հաւասարութիւն. այնպիսի մարդիկ, որոնք մերժում են առհասարակ որ և է կրօնի կարեւորութիւնը, մինչև ներկայ ժամանակները շատ քիչ էին Միացեալ Նահանգներում, իսկ հարաւում նրանց գոյութեան մասին երբէք չի լսուել: Այս պատճառով ահա երբէք չի կարելի ասել, որ Միացեալ Նահանգները չեղօք դիւրք ունին բռնած կրօնական խընդիրներում:

Առաջներում Նահանգներն այնքան էլ անտարբեր չէին դէպի զանազան կրօնները: Նոր Անգլիայի Նահանգները՝ բացի Ռօդ-Իսլանդից սկսեցին ինչ որ պուրիտանական նուիրապետութիւնից և իրենց կրօնական համայնքին չը պատկանողներին իրաւունք չէին տալիս քաղաքապետական պաշտօններ գրաւելու: Հակաեպիսկոպոսականութիւնը գլխաւոր պահանջն էր, իսկ կաթոլիկների, կվակերների և բապտիստների այդ հինգ Նահանգները վարւում էին շատ խիստ: Մի քանի Նահանգների առաջին սահմանադրութիւնները իսկապէս ընդունում էին տիրող եկեղեցու գոյութիւնը, սրովհետև տեղացի ազգաբնակչութիւնից հրապարակական աստուածաշտուութեան համար դրամ էին պահանջում: Միայն 1818 թուին, երբ Կօնեկտիկուտը հաստատեց իւր նոր սահմանադրութիւնը, կրօնական բոլոր խմբակցութիւնները դասեց հաւասար և հաւատացողներին իրաւունք տուաւ պահպանելու իրենց եկեղեցիները կամաւոր նուիրատուութեամբ: Մասսաչուզէտում հակաեպիսկոպոսականների եկեղեցիների պահպանութեան համար մինչև 1811 թիւը այն բոլոր քաղաքների վրայ հարկ էր դրուած, որոնք օրէնքով ճանաչուած կրօնական որ և է խմբակցութեան չէին պատկանում, իսկ կրօնական հաւատարութիւն ընդունեցին մի միայն 1833 թուին սահմանադրութեան սրբագրութեամբ: Վիրջինիայում, Հիւսիսային և Հարաւային Կարօլինայում և Մարիլանդում բողոքական եպիսկոպոսական եկեղեցին մինչև յեղափոխութիւնը՝ տիրող դիւրք ունէր, մինչև որ կրօնական

բոլոր տարբերութիւնները ոչնչացուեցին և մասնակի եկեղեցական արտօնութիւնները մտքերի ռամկավարական տրամադրութեան ազդեցութեան չնորհիւ վերացուեցին: Այդ փոփոխութիւնները դիւրութեամբ կատարուեցին, որովհետև անգլիական հոգևորականութիւնը առանձին համակրանք էր ցոյց տալիս տորիներին՝ (աշխատում էր պահպանել Մեծ Բրիտանիայի հետ ունեցած կապը), և այդ պատճառով մի քանի տեղերում և մասնաւորապէս Վիրջինիայում՝ Նօնկոմֆօրմիստներն՝ անգլիական եկեղեցուն չը հետևողներն, ենթարկուում էին որոշ հալածանքի: Պենսիլվանիայում երբէք պաշտօնապէս հաստատուած եկեղեցի չի եղել. բայց Նիւ-Յօրկում գաղթականական հին սիստեմի (ձևի) ժամանակ առանձին համակրութիւն էին վայելում հօլանդական բողոքականները, իսկ յետոյ անգլիական եկեղեցուն հետևողները: Ուշագրութեան արժանի է այն փաստը, որ այդ բոլոր դէպքերում առանձնաշնորհեալ եկեղեցիների վերացումը առանձին դժուարութեան չէր հանդիպում և մարդկանց մէջ զայրոյթ առաջ չէր բերում: Հարաւում նա ըստ երևոյթին յեղափոխութեան բնական հետևանք էր: Նոր Անգլիայում այդ տեղի ունեցաւ առաիճանաբար, որովհետև իւրաքանչիւր Նահանգի քաղաքական զարգացման անխուսափելի հետևանք էր: Եկեղեցական նախկին կազմակերպութիւնը սերտ կապուած չէր որ և է հարուստ կամ ազդեցիկ դասակարգի դրամական շահերի հետ. բացի դրանից ամենքն էլ գիտակցում էին, որ հաւատարութիւնն ու ռամկավարական սկզբունքը ակնյայտնի կերպով հակասում էին կրօնական ասպարիզում որոշ առանձնաշնորհութիւնների գոյութեան: Բայց և այնպէս թէ Կօնէքտիկուտում և թէ Մասսաչուզէտում տիրող եկեղեցին վերացնելը առանց կռուի տեղի չունեցաւ: Հակաեպիսկոպոսականների հոգևորականութիւնը նախագուշակում էր, որ այդ փոփոխութիւնից փլաս տուալ կը գայ. թէ և վերջը ամենքն էլ խոստովանում էին, որ այդ փոփոխութիւնը բարերար հետևանք

ունեցաւ հէնց իրենց սեփական եկեղեցիների համար: Այնուհետեւ երբէք ոչ ոք չի պահանջել, որ որ և է նահանգում ոչ թէ վերականգնուի տիրող դաւանութիւնը, այլ որ յատկացուի եկեղեցիների պահպանութեան համար որ և է գումար կամ օրէնքներ խմբագրուին կրօնական գանազան խմբակցութիւնների համար: Բոլոր ամերիկացիք ընդունում են որպէս ճշմարտութիւն, որ քաղաքացիական իշխանութիւնը ոչ միայն պարտաւոր է չեզոք և անաշտովի ել կրօնական գանազան դաւանութիւնների վերաբերութեամբ, այլ որ չը պէտք է շոյափի այդ խնդիրը, որ նա այդ խնդիրներին ճիշտ այնպէս պէտք է վերաբերուի, ինչպէս որ վերաբերում է քաղաքացիների արտիստիքական կամ դրականական գործունէութեան¹⁾:

Միացեալ Նահանգներում այս խնդրի մասին երկու տարբեր կարծիք գոյութիւն չունի: Նոյն իսկ բողոքական եպիսկոպոսական հոգևորականութիւնը, որը շատ պատճառներով նախանձում է իւր անգլիական եղբայրակիցներին, նոյն իսկ կաթոլիկ եպիսկոպոսները, որոնց կրօնական դաւանութիւնը թոյլ է տալիս դիմելու մարմնաւոր իշխանութեան և աջակցութիւն խնդրել պահպանելու ճշմարիտ հաւատը, եւրոպայից եկող ճանապարհորդին միշտ հաւատացնում են, որ եթէ Նահանգները ռոճիկ առաջարկեն, իրենք չեն ընդունիլ, որ այն ազատութիւնը, որով նրանք այժմ օգտւում են, իրենք գերազաս են համարում այն օգուտներից, որ կարող էին ստանալ Նահանգներից: Ներկայումս իւրաքանչիւր կրօնական համայնքն իրաւունք ունի ցանկացած կազմակերպութիւն մտցնելու,

¹⁾ Բայց կարծում եմ, որ բազմաթիւները և մէթօքլիտները նախաձեռնութեամբ որոշ ժամանակից իվեր սկսեցին ցանկութիւն յայտնել, որ Աստուած բառը մտցնուի միացեալ ուսման նազրութեան մէջ: Այդպէս ցանկացողներն ըստ երևոյթին կարծում են, որ այդ ձևով միացեալ հասարակապետութիւնը կը սրբազործուէր և միևնոյն ժամանակ կերևար այդպիսով, որ ամբողջ ազգը հաւատում է Աստուծոյ գոյութեան:

կարող է հաստատել հաւատոյ և եկեղեցական բարեկարգութեան որոշ կանոններ, կարող է այդ կանոնները խախտելու համար պատիժներ որոշել, կարող է ժողովել և ծախսել ըստ իւր բարեհայեցողութեան կամաւոր նուիրատուութիւններ, Նահանգներից հովանաւորուած և նպաստատացող եկեղեցին այդ անել չը պէտք է կարողանար, որովհետեւ ենթարկուած կլինէր կօնտրոլի Նահանգի կողմից, և նախանձի ու ատելութեան առիթ պէտք է տար միւս ազանգներին: Նահանգի կրօնական գործերին միջամտելու խնդրում տարածայնութիւնները գլխաւորապէս տեղի չեն ունենում մի միայն որ և է կրօնական կազմակերպութեան իրաւասութեան ներքոյ գտնուող այս կամ այն բարեգործական հիմնարկութեան հասարակաց գումարներից նպաստներ յատկացնելու խնդրում: Մի քանի Նահանգներում այդպիսի նպաստներ յատկացնելը վերջնականապէս արգելուած է: Բայց կարող է պատահել, որ որ և է բարեգործական նպատակն իրականացնելու համար, ամենայնամար ձևն է արդէն գոյութիւն ունեցող և յաջողութեամբ գործող հիմնարկութեանը որոշ օժանդակութիւն տալը: Բայց նպաստ տալու այդ առիթը մատնանիչ են անում ոչ այնքան բարեգործութեան, որքան որ և է կրօնական կազմակերպութեան կամ առնուազն նրա հոգևորականութեան ձայնն ու աջակցութիւնը ձեռք բերելու համար: Մի քանի Նահանգներում, մանաւանդ Նիւ-Եօրկի Նահանգում օրէնսդիր ժողովներին յաճախ մեղադրում են նրա համար, որ կաթոլիկաց հիմնարկութիւններին նպաստ են նշանակում կաթոլիկների քուէները վաստակելու¹⁾:

Բայց և այդ դէպքերում նպաստը տրւում է ոչ թէ կրօնական, այլ բարեգործական — կրթական նպատակով: Ոչ

¹⁾ 1870 թուին հռովմէական կաթոլիկները բարեգործական հիմնարկութիւններն ու ձրի դպրոցները Նիւ-Եօրկի Նահանգում ստանում էին 400,000 դօլլար (800,000 ռուբլի): Նոյն թուին տրւում էր նաև 72000 դօլլար կրօնական կորպորացիաների միւս հիմնարկութիւններին:

մի եկեղեցական հաստատութիւն չի կարող այնքան ուժեղ և ազդեցիկ դառնալ, որ նրա պահպանութեան համար հասարակական գումարներէց դրամ տրուի, կամ նրա հոգևորականներին որ և է առանձնաշնորհումներ տրուին: Ամերիկայում այնքան ուժեղ է մարդկանց սէրը դէպի կրօնական և քաղաքացիական ազատութիւնը, որ ոչ ոք չի համարձակուիլ գործել այդ բանի դէմ, ոչ մի բան այնպէս չի կարող ընդհանուր դժգոհութիւն առաջացնել, ինչպէս այդ կանէր որ և է եկեղեցու կողմից քաղաքականութեան խառնուելու փորձը: Դէպի մորմոններն ունեցած հակակրօնութիւնը բացատրուում է ոչ թէ դէպի բազմակրօնութիւն ունեցած հակակրօնութիւնը, այլ և նրանով, որ այդ կրօնական աղանդի նուիրապետութիւնը բունապետական մի գաղտնի տէրութիւն է հանդիսանում տէրութեան մէջ, որը խստիւ հակասում է ռամկավարական հիմնարկութիւնների ոգուն:

Եթէ եւրոպայում մարմնաւոր իշխանութիւնը իւր հովանաւորութեան տակ չի առնում, կամ չի պահպանում որ և է կրօնական հիմնարկութիւն, այդ արդէն համարուում է յայտարար այդ կառավարութեան անարգական վերաբերմունքի դէպի ազգաբնակչութեան կրօնական շահերը: Որ և է եկեղեցի չը ճանաչող պետութիւնը համարուում է անաստուած, իսկ քրիստոնէական որ և է եկեղեցուց իրեն նախկին առանձնաշնորհութիւններ խլելը՝ համարուում է ամբողջ ազգի անպատուութիւն: Բայց ամերիկացիք երբէք արժանի չեն այդ մեղադրանքին, և ես աւելորդ չեմ համարում մի քանի տող նուիրել պարզելու նրանց այս խնդրի մասին ունեցած հայեացքը:

Մարմնաւոր իշխանութեան չեզոքութիւնը այն բոլոր խնդիրներին միջամտելու, որոնք վերաբերում են կրօնական հաւատալիքներին կամ ծէսերին, կարող է հիմնուած լինել երկու սկզբունքի վրայ, որոնցից մինը կարելի է կոչել քաղաքական, իսկ միւսը կրօնական: Քաղաքական սկզբունքն առաջ է գալիս ազատութեան և հաւասարու-

թեան գաղափարից: Մարմնաւոր իշխանութեան բունի միջոցներն՝ այդ պատճառով համարուում են մտքի և գործունէութեան ազատութեան այնպիսի խախտումն, որը կարելի է արդարացնել մի միայն այն դէպքում, երբ կրօնական կոչուող որ և է վարդապետութիւն իւր անբարոյական և հակաընկերվարական բնաւորութեամբ սպառնում է հասարակաց բարեկեցութեան: Այս սկզբունքի տեսակէտից կրօնական ամենամեղմ ճնշումն անգամ, զոր օրինակ, որ և է աղանդին հետևողներին հասարակական պաշտօններ գրաւելու իրաւունք չը տալը, համարուում է հակառակ քաղաքացիների անձնական ազատութեան և նրանց այն իրաւունքների, որոնք մեր ժամանակ համարուում են անկապտելի: Եթէ անգամ նահանգը կրօնական հաւատալիքների համար ոչ ոքի չը զրկի քաղաքացիական պաշտօններ գրաւելու իրաւունքից, այլ միայն բաւականանայ որ և է եկեղեցուն նպաստ նշանակելով, կամ հոգևորականներին առանձին արտօնութիւն տալով, գործողութեան այդ եղանակը կը համարուէր հաւասարութեան խախտումն, որովհետև մարդկանցից մի քանիսին բարձր դասած կլինէր միւսներից այնպիսի շրջանակում, որում նահանգը անձեռնհաս է:

Երկրորդ սկզբունքը, որը մեր քննած խնդրի զուտ կրօնական հայեցակէտն ի նկատի ունի, բղխում է ուղղակի «եկեղեցի» հասկացողութիւնից, որը գոյութիւն ունի որպէս հոգևոր հիմնարկութիւն կրօնական նպատակով և այդ շաւղից չի շեղուում: Այդ հիմնարկութիւնը հաւատացեալների ժողովն է, որոնք միացած են իրար հետ դէպի Բարձրեալն ունեցած հաւատով, Փրկչի երկրային կեանքի յիշողութիւններով, այդ կեանքին նմանուելու ցանկութեամբ՝ որքան որ ներում են մարդկային թուլութիւնները և հանդերձեալ կեանքում արքայութիւն ժառանգելու յուսով: Ճնշումն, ինչպէս էլ որ լինէր, անշուշտ կը հակասէր այդպիսի մի հիմնարկութեան գաղափարին, հիմնարկութեան, որը ապրում է ոչ թէ օրէնքի թելադրութեամբ:

այլ սիրով և բարեպաշտութեան զգացմունքով: Այդպիսի հիմնարկութիւնը նահանգից ոչ մի օգնութիւն չի հայցել, որովհետև նա իւր կենսական ոյժերը ստանում է ի վերուստ և այն պատճառով, որ նրա արքայութիւնն այս աշխարհից չէ: Նա բացառիկ արտօնութիւններ չի հայցում, որովհետև դրանով առիթ կը տար ոչ միայն իրեն հետևողներին, և միևս կրօնական խմբակցութիւնների թըշնամանքին, այլ և դէպ իրեն կը գրաւէր համոզմունքով տարբեր մարդկանց, իսկ իւր հետևողների անկեղծ զգացմունքները քարոյսպէս կը փչացնէր ու կը վնասէր: Նա հազիւ թէ կարողանար ենթարկուել նահանգի կօնտրոլին, որովհետև նահանգը բաղկացած է շատ անգամ այնպիսի մարդկանցից, որոնք մասամբ կամ ընդհանուր առմամբ նրա հաւատալիքներին չեն հետևում և անտարբեր են դէպի նրա բարեպաշտական նպատակները: Սորանից պարզ հետևում է, որ եկեղեցին՝ որպէս հաւատացեալների ժողով, որի անդամները ոգևորուած են կրօնական նոյն ձգտումներով, կը ծաղկի և կը զօրանայ միայն այն ժամանակ, երբ միանգամայն անկախ կլինի, չի օգտուիլ մարմնաւոր իշխանութեան հովանաւորութեամբ և օրէնքով կը սահմանափակուի միայն այն դէպքում, երբ դուրս կը գայ իւր սեփական գործունէութեան շրջանակից (սֆերայից) և կը խառնուի աշխարհային գործերին:

Ամերիկացիք աւելի առաջին հայեացքով են ղեկավարուել, քան երկրորդով: Երկրորդ հայեացքն այժմս քաջալերութիւն կը գտնէր անկեղծ հաւատացող մարդկանց կողմից: Բայց երբ արժարժուեց առաջին խնդիրը ամերիկական հասարակապետութեան սկզբներում, քաղաքական միտումները միանգամայն բաւարար համարուեցին լուծման համար և այնուհետև գործնական ոչ մի հանգամանք չը կարողացաւ ստիպել ամերիկացիներին՝ ստուգել եկեղեցու վարդապետութիւնը կամ քննել պատմական փաստերի հիման վրայ, թէ արդեօք պետութեան միջամտութիւնը նպաստել թէ արգելք է եղել եկեղեցա-



կան հիմնարկութիւնների բարերար ազդեցութեան ցեալ տաան և հինգ դարերի ընթացքում: Բայց պէտք է ասել, որ դրան ուրիշ պատճառ էլ կար և այդ ամերիկացուց նեղ հասկացողութիւնն էր նոյն իսկ պետութեան մասին: Նրանց հասկացողութեամբ պետութիւնը իդէալական բարոյական իշխանութիւն չէ, ինչպէս այդ ընդունում է ֆրանսիական, գերմանական և անգլիական մի քանի փիլիսոփաների կարծիքով, որը պարտաւոր է կազմակերպել հպատակների բնաւորութիւնը և ղեկավար լինել նրանց կեանքի եղանակի: Նա առաւել նման է առևտրական ընկերութեան, կամ հասարակական հսկայական ժողովի, որը հիմնուած է վարելու ազգաբնակչութիւնը շահագրգռող մի քանի գործեր—ժողովելու և ծախսելու տուրքերը հասարակաց շահերի համար, բայց որը գլխաւորապէս ընկերութեան անդամներին, կամ տեղական քաղաքացիներին է թողնում՝ գործել իրենց բարեհայեցողութեան համաձայն: Եթէ այս սկզբունքներով կազմակերպուած համայնքը հոգ տանէր ոչ միայն վարչական գործերին, այլ և հետևէր իւր անդամների կարծիքներին և վարք ու բարքին, այդ նոյնքան անտեղի կլինէր, որքան անտեղի կլինէր, եթէ որ և է երկաթուղիական ընկերութիւն յանկարծ որոշէր քննել, թէ իւր բաժնետէրերից քանի հոգի են ընտրութիւններին մասնակցել: Այդ պատճառով էլ երբէք ամերիկացու մտքովն անգամ չի անցնիլ, որ կարող են լինել որ և է պատճառներ, որոնց հիման վրայ գոյութիւն ունենայ կառավարութիւնից հովանաւորեալ յատուկ եկեղեցի և նրանց սաստիկ զարմացում է, երբ եւրոպացիք նման խնդիրներում առանձին եռանդ են ցոյց տալիս:

Շնորհիւ այն հանգամանքի, որ այդպիսի խնդիրներն Ամերիկայում վաղուց արդէն լուծուին են ստացել և այլևս մտքել չեն զբաղեցնում, մասամբ էլ գտնէ այն պատճառով, որ ամերիկացիք առաւել տրամադիր են գործնական ազատութեան, քան մանրակրկիտ ճշտապահութեան, թէ

ազգային և թէ նահանգների կառավարութիւնները կարծես պաշտօնապէս քրիստոնէութիւնը տիրող կրօն են ընդունում և այդպիսով շեղում են այն հիմնական կանոնից, որ աշխարհային իշխանութիւնը կրօնական գործերում չեղոք պէտք է լինի: Իրաւասունների իւրաքանչիւր ժողովում կայ հոգևորական մի անձն, որը նիստերը բաց է անում որոշ աղօթքով: Հունձը վերջանալուց յետոյ հասարակապետութեան նախագահը հրատարակում է շրջաբերական, հրամայելով, որ ամենայն տեղ կատարուին գոհացողական մաղթանքներ, իսկ երբեմն ուղղակի օր է որոշում, թէ երբ պէտք է պաօ պահել և աղօթել: Նահանգների օրէնսդրական ժողովներումն էլ են աղօթքներ կարդացում, իսկ նահանգապետները հրատարակում են ծանուցումներ, որոնցով օրեր են որոշում կրօնական պարտաւորութիւններ կատարելու համար¹⁾:

1863 թուի ներքին պատերազմի ժամանակ ազգային ժողովը նախագահին խնդրեց օր նշանակել աղօթքի և բարեպաշտութեան համար: Զօրաց և նաւատորմի մէջ պաշտօն են մատուցանում զանազան դաւանութեան հոգևորականներ և երբէք դժուարութիւն առաջ չի եկել նրանց հայեացքների տարբերութեան պատճառով:

Նահանգներից շատերում գեւ գոյութիւն ունին օրէնքներ, որով պատժում են կրօն հայհոյողներին և Աստուծոյ անպատշաճ երդումների համար՝ թէև պէտք է ասել, որ մի քանի տեղ այդ օրէնքներն յայտնի կերպով խախտում են և բազմաթիւ դէպքերում անպատիժ մնում: Գոյութիւն ունին նաև օրէնքներ, որոնցով արգելում կամ սահմանափակում է կիրակնօրեայ առևտուրը և պաշտպանութեան տակ առնում բացօդեայ կրօնական համախմբումներն ու կրօնական հանդէսները: Նահանգների հաշուով պահուող հասարակական գալլօցներում կար-

1) Միայն Միչիգանում և Օրէգոնում արգելուած է եկեղեցական կարգեր կատարելու համար դրամ բաց թողնել նահանգի եկամուտներից:

դացւում է Աստուածաշունչը և թէև այդ առթիւ երբեմն վէճ է ծագում, սակայն այդ սովորութիւնն, ինչպէս երևում է, գոհացնում է ժողովրդի ցանկութիւնը:

Ինձ թւում է, որ վերոյգրեալներից կարելի է եզրակացնել հետևեալը. թէև քրիստոնէական կրօնը Միացեալ Նահանգներում օրէնքով անորոշ, բայց այնուամենայնիւ իրականապէս ազգային կրօն է համարում: Ամերիկացիք իրենց հասարակապետութիւնն երբէք անասուած չեն համարում, բայց այնպէս են կարծում, որ կառավարութեան կրօնական բնաւորութիւնը կայանում է առանձին քաղաքայինների հաւատոյ և այն ձգտման մէջ, որ նրանք աշխատում են իրենց գործունէութիւնը այդ հաւատալիքների համերաշխ դարձնել: Նրանք պնդում են, որ քրիստոնէութեան հետ իրենց ունեցած կապն էր ժողովրդի բարեկեցութեան գլխաւոր աղբիւրը և որ նրանց ազգը նախախնամութեան առանձին ողորմութեամբ է օգտուում:

Միացեալ Նահանգներում քրիստոնէական եկեղեցիների լէգալ դրութիւնը միանգամայն նման է կառավարութիւնից հաստատուած կամ չը հաստատուած կամաւոր այն ընկերակցութեանց, որոնք գործում են ընդհանուր օրէնքների հիման վրայ: Այնտեղ առանձին եկեղեցական օրէնքների նման մի բան գոյութիւն չունի: Երբ որ ոչ միայն եկեղեցական սեփականութեան, այլ և եկեղեցական կարգապահութեան վերաբերեալ խնդիրներն հասնում են դատաստանական քննութեան, նրանք քննում են ճիշտ այնպէս, ինչպէս պայմանագիրների վերաբերեալ խնդիրները, իսկ երբ դատաւորներին պատահում է քննել որ և է աստուածաբանական խնդիր, օրինակ—արդեօք որ և է հոգևորական այնպիսի կարծիք չի յայտնել, որն անհամապատասխան է այն գօգմաների, (դաւանաբանութեան) որ նա պարտաւորուել է պահպանել և ճանաչել որպէս ճշմարտութիւն, նրանք ամենայն հաճութեամբ այդ խնդիրների լուծումը կը յանձնէին եկեղեցական իշխանութեան, եթէ միայն այդ բանի իրաւունքն ունենային: Այս պատճառով

էլ նրանք վիճելի խնդիրը քննում են զուտ օրինականութեան տեսակէտից և երբէք չեն շօշափում նրա աստուածաբանական կողմը, չառաջնորդուելով երբէք և քաղաքական միտումներով¹⁾։

Կրօնական ամեն մի միաբանութիւն կարող է մտցնել իւր ցանկացած կազմակերպութիւնը։ Նահանգները երբէք չեն պահանջում, որ այդ բանի համար իրենցից թոյլտուութիւն ստանան։ Նրանք թոյլ են տալիս մտցնել եկեղեցական կառավարութեան ցանկացած ձևը և եկեղեցական սեփականութիւն կառավարելու ուղղած եղանակը՝ թէ լիազօրների և թէ մասնաժողովների միջոցաւ, որոնք կազմակերպուած պէտք է լինին կամ նահանգների ընդհանուր օրէնքներով և կամ մի նահանգի յատուկ օրէնսդրութեամբ։ Երբեմն միայն սահման է նշանակուում այն գոյքի կամ սեփականութեան, որը կարող է պատկանել այս կամ այն եկեղեցական կազմակերպութեան, բայց ընդհանրապէս կարելի է պնդել, որ մարմնաւոր իշխանութիւնը երբէք նախանձ չի ցոյց տալիս դէպի հոգևոր իշխանութիւնը և թոյլ է տալիս նրան ազատօրէն տարածելու իւր ազդեցութիւնը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդպիսի ներօրոգամտութիւնն անմիջապէս կանյայտանար, եթէ որևէ եկեղեցական իշխանութիւն վտանգաւոր դառնար իւր անբաւ հարստութեամբ և կամ իւր կրօնական կազմակերպութեան անդամների վրայ ունեցած ազդեցութեամբ։ Բայց Ամերիկայում երբէք վտանգաւոր ծաւալ չեն ստացել մի քանի անգամ փորձած և այժմս էլ Եւրոպային երկիւղ ազդող այն դժուարութիւնները, որոնք առաջ են գալիս որևէ եկեղեցական կազմակերպութեան զօրեղ ազդեցութիւնից։ Կրօնական ընկերութիւններն Ամերիկայում այնպիսի ընդհանուր համակրութեամբ են օգտուում, որ նահանգներից շատերում նրանց սեփականութիւնը ամեն

1) ձեռնոյնպիսի չեղողութեամբ վճռեց Աւրելիանոս կայսրը երկու քրիստոնէական եկեղեցիներն մէջ եղած վէճը։

տեսակ տուրքերից ազատ են (թողնում¹⁾)։ Յօդուտ նրանց բերում էր այն պատճառաբանութիւնը, որ նրանք բարոյական լաւ ազդեցութիւն ունին և քչացնում են ոտտիկանութիւն պահելու ծախքը։ Երկու թէ երեք Նահանգներում որոշ չափով սահմանափակուած է կրօնական կազմակերպութիւն հիմնելու գործը, իսկ Մարիլանդում կարելի է կտակել անձնական գոյքը կրօնական նպատակներով միայն տեղական օրէնսդրական ժողովի թոյլտուութեամբ։ Սակայն ընդհանուր առմամբ կրօնական ընկերակցութիւններն օգտուում են օրէնսդրական մարմնի ուղղակի տրամադրութեամբ։

Միացեալ նահանգների կրօնական զանազան ընկերակցութիւնների թիւը ճշտիւ յայտնի չէ, որովհետև 1880 թուին եղած փորձը՝ իմանալու համար, թէ իւրաքանչիւր դաւանութեան պատկանող անձանց թիւն ինչքան է, յաջողութիւն չունեցաւ։

1870 թուին կրօնական կազմակերպութիւնների իրենց տուած տեղեկութիւնների համաձայն մենք այդ կազմակերպութիւններից գլխաւորների մասին կարող ենք հաշորդել հետևեալ վիճակագրական տեղեկութիւններ։

Մէթոդիստներ	քահանայք	ժողովուրդ
— Եպիսկոպոսականներ	14,075	1,990,377
— Հարաւային եպիսկոպոսականներ	4434	1,056,058
— Մէթոդիստների այլ կազմակերպութիւններ		1,480,000
Բապտիստներ	19,377	2,732,570

1) Վաշինգտօնի նահանգապետն 1881 թուին իւր շրջաբերականում, որն ուղղուած էր օրէնսդիր ժողովին, առաջարկում էր ամէն տեսակ տուրքերից ազատ թողնել եկեղեցական սեփականութիւնը ոչ միայն նրա համար, որ «եկեղեցիներն ուղարկուած կը թուրքեան տաճարներ են, որոնք հաւասար կերպով պարզուում են ներքին խաղաղութիւն, երջանկութիւն և անդորրութիւն, այլ և նրա համար որ եկեղեցիք բարձրացնում են շրջակայ հոգերի արժէքը»։

— Բապտիստների մանր կազմակերպութիւններ	5,872	854,000
Պրեսվիտերիաններ	5,654	696,727
— Հարաւ. պրեսվիտ. եկեղեցի	1,116	150,398
— Պրեսվիտ. այլ կազմակերպութիւններ	2,486	270,000
Լիւտերականներ	4,215	987,600
Միաբանականներ (կաթոլիկ)	4,090	436,376
Եպիսկոպոսական եկեղեցու բողոքականներ	3,919	432,323

Ինչպէս երևում է, պակասում են կաթոլիկների թիւը որոշող փաստերը, որոնք անշուշտ մեծ թիւ են կազմում մանաւանդ քաղաքներում, որտեղ բազմաթիւ եւրոպացի գաղթականներ կան: Հէնց իրենց՝ կաթոլիկների կարծիքով նրանց թիւը վեց միլիոնից աւելի է: Վերև թուած կրօնական կազմակերպութեանց մէջ մէթոդիստներն ու բապտիստներն ամեն տեղ բազմաթիւ են, իսկ մէթոդիստներն հարաւում առանձնապէս մեծ թիւ են կազմում և նեգրների մէջ Աւետարանի գլխաւոր քարոզիչները նրանք են: Միաբանականներն ամենից շատ են պատահում Նոր Անգլիայում և արևմտեան նահանգների այն մասերում, որոնք բնակեցրած են Նոր Անգլիայից եկուորներով: Պրեսվիտերեաններն ամենից շատ են կեդրոնական նահանգներում—Նիւ-Եօրկում, Նիւ-Ջէրսէյում, Պէնսիլվանիայում և հարաւում, որտեղ նրանց բազմութիւնը նրանով է բացատրւում, որ անցեալ դարու կիսին այնտեղ էին գաղթում Ուլստէրից եկողները, իսկ աւելի հին ժամանակներում—Հոլլանդիայից գաղթողները, բայց արևմտեան մասում էլ ամեն տեղ ցրուած են նրանց հետևողները: Ունիթոռները սակաւաթիւ են Նոր Անգլիայից դուրսը և այն երկիրներում, որտեղ գաղթում էին այնտեղից, բայց նրանք, չընայած այդ բանին, չնորհիւ իրենց հռչակաւոր աստուածաբանների՝ օրինակ Կանինգի,

էմբրսոնի, Թէոդոր Պարկերի և բարձր կրթութեան տէր անձանց, օգտուում էին մեծ ազդեցութեամբ: Կաթոլիկները, բացի Մարիլանդում և Լուիզիանում ապրողներից, կամ Իրլանդիայից են, կամ Գերմանիայից և կամ Պրանսիական Կանադայից: Վերջին ժամանակներս, ինչպէս պատմում են, հարաւային նեգրներից շատերը կաթոլիկութիւն են ընդունել:

Ինքն ըստինքեան հասկանալի է, որ Ամերիկայում կրօնական կազմակերպութիւնների մէջ չկայ այնպիսի սոցիալական տարբերութիւն, որը գոյութիւն ունի Անգլիայում: Ամերիկայում ոչ հոգևորական և ոչ էլ աշխարհական անձինք միւս դաւանութիւններին հետևողներին իրենցից ոչ բարձր են համարում և ոչ էլ ստոր: Հռոմէական եկեղեցին ի հարկէ բողոքականներից իրեն խորթ է պահում և նրանց հերետիկոս համարում, և թէպէտ Հռոմէայ պապի իշխանութեան առաքեալներից ժառանգած լինելու վարդապետութիւնը ամերիկական բողոքականների կողմից այնքան կենսական չի համարւում, որքան կարծում էին անգլիական բողոքականները, բայց կաթոլիկ հոգևորականութիւնը թոյլ չի տալիս, որ այլադաւան հոգևորականներն իրենց եկեղեցական ամբիոնը բարձրանան, թէև ինքն երբեմն երևում է նրանց ամբիոնների վրայ: Ամբիոնների այդպէս փոխանակութիւնը շատ յաճախ տեղի ունի պրեսվիտերիանների, նոնկոմֆորմիստների և բողոքական այլ կազմակերպութիւնների մէջ: Հիւսիսային արևմտեան մի քանի գաւառներում եպիսկոպոսական բողոքական եկեղեցին երկար ժամանակ աւելի յարգի էր (доминантная) քան միւս բողոքական եկեղեցիք, այդ պատճառով աւելի այդ եկեղեցու ծոցն էին մտնում կրօնական նախապաշարութեանից ազատ մարդիկ, որոնք ցանկանում էին հասարակութեան մէջ յարգանք վայելել: Եպիսկոպոսական եկեղեցու հետևողների տարեկան ժողովներին բազմիցս առաջարկուել է, որ այդ եկեղեցին անուանուի Ամերիկացւոց ազգային եկեղեցի, բայց չնորհիւ մեծամասնութեան

առողջ գատողութեան, այդ առաջարկը միշտ մերժուում էր, որովհետեւ ժողովականները քաջ գիտէին, որ այդպիսի միտումներով նա մեծ դժգոհութիւն առաջ կը բերէր միւս գաւառներէն հետեւողներին մէջ: Մակայն հարաւում պրէսովիտերեաններ, իսկ մի քանի տեղ էլ մէթոդիստներ նոյն յարգանքն են վայելում աշխարհական տեսակէտից, մինչդեռ բապտիստների, կաթողիկոսների և մէթոդիստների գլխաւոր նեցուկն է ժողովուրդը՝ մասսան:

Վերջին տարիներս ազատօրէն քննում էին գլխաւոր բողոքական գաւառներէն հետեւողների՝ մանաւանդ պրեսովիտերեանների, լիւտերականների և կօնգրէգացիօնալիստների (եպիսկոպոսութիւն չընդունող անգլիական ազանդէ) միացման խնդիրը: Այդ փորձերը վկայում են, որ զանազան գաւառներէն հոգևորական անձանց մէջ զօրանում է փոխադարձ սէրը և միևնոյն ժամանակ եկեղեցական վարչութիւնների մէջ եղած դաւանաբանական մանր մունր զանազանութեան վերաբերեալ անտարբերութիւնը: Թէև հոգևորականների շահերը լուրջ դժուարութիւններ են յարուցանում փոքրիկ քաղաքներում և գիւղերում այդ նպատակի դէմ, բայց և այնպէս կարելի է յուսալ, որ մօտ ապագայում կիրականանան այդպիսի միութեանց բազմաթիւ ծրագիրներ:

Կրօնական իւրաքանչիւր կազմակերպութեան հոգևորականների սօցիալական դրութիւնը միանգամայն համապատասխան է կազմակերպութեան ոգուն.— Պրեսովիտերեանների պատօրները, կօնգրէգացիօնալիստներինը, եպիսկոպոսականներինը և ունիթոուներինը պատկանում են սօցիալական աւելի բարձր դասակարգի, քան մէթոդիստների, բապտիստների և կաթողիկոսների քահանաները: Առաջիններն համարեա միշտ որ և է համալսարանում գիտնական որոշ աստիճան ստացողներ շարքին են, կամ որ և է կօլլէժից, ուր նրանք շփուել են բարձր ընտանիքների զաւակների հետ և որտեղից դուրս են բերել համալսարանական կրթութեան այն տիպարը, որ մեծապէս գնա-

հատում է Ամերիկայում: Ինչպէս Անգլիայում, այնպէս էլ այստեղ նրանցից քչերն են հարուստ գասակարգից և արհեստաւորներից: Աւետարանի քարոզչի դրութիւնը միշտ բարձրացնում է մարդու անձնական արժանիքը.— այսինքն նա տալիս է որոշ նախապատուութիւն այն հասարակութեան մէջ, որին նա պատկանում է իւր ընտանեկան կապերով, իւր նիւթական միջոյններով և իւր կրթութեամբ: Մեծ քաղաքներում գլխաւոր գաւառներէնների բարձրաստիճան հոգևորական անձինք, ինչպէս և կաթողիկոսները, եպիսկոպոսականներն ու բողոքականները՝ պատկանում են քաղաքի ամենայարգուած դասակարգի շարքին և յաճախ աւելի մեծ ազդեցութիւն ունին՝ քան աշխարհականները.— երբեմն որպէս եկեղեցական հանճարեղ քարոզիչներ, երբեմն եռանդուն մարդասիրութեան և երբեմն էլ հուշակաւոր գիտնականութեան շնորհիւ: Երկրորդ կարգի քաղաքներում հոգևորականութիւնը ամենալաւ հասարակութեան շրջանումն է ընդունուած, եթէ միայն նրա անդամները (ինչպէս որ այդ սովորաբար լինում է) բարեկիրթ մարդիկ են: Ճիշտ նոյնպէս էլ գիւղում պատօրը (քարոզիչ քահանան) իւր հօտի սովորական անդամներից միշտ բարձր է կանգնած թէ իւր կրթութեամբ և թէ իւր ուսումով: Նա սովորաբար գլուխ է կանգնում բարեգործական նպատակ ունեցող ամենայն ձեռնարկութեանց: Հոգևորականութեան կրթութեան և գիտութեան աստիճանը բարձրանում է այն չափով, ինչ չափով որ լաւանում և բարւոքում է համալսարանական դասաւանդութիւնը: Այդ յառաջագիւծութիւնը համարեա աւելի է նկատում այն կրօնական կազմակերպութիւնների մէջ, որոնք առաջ ինչպէս մէթոդիստներն և բապտիստները՝ պատկանում էին յետամնացների շարքին, — որովհետեւ նրանց հետեւողներն աւելի խեղճ և քաւոր մարդիկ են: Որքան ինձ յայտնի է, հոգևորականների եկամուտներն էլ օրէց օր աճում են: Մեծ քաղաքներում մի քանի հոգևորականներ ստանում են տարեկան 10,000 դօլլար (20,000 ռուբլի) և

երբեմն էլ աւելի. Փոքր քաղաքներում պրեսվիտերեանների, եպիսկոպոսականների և ունիթոանների հոգևորականների եկամուտը միջին թուով հասնում է 3000 դոլլարի (6000 ռուբլու). իսկ գիւղական շրջաններում շատ քիչ կը պատահի, որ 1000 դոլլարից (2000 ռուբլուց) քիչ լինի¹⁾. Այս եկամուտներն ի հարկ է աւելի մեծ են քան անգլիական և շոտլանդական հոգևորականների ստացածները. աւելի մեծ այն ոռոճից, որ Ֆրանսիական կառավարութիւնը վճարում է հոգևորականութեան և գերմանիայինը՝ բողոքական պատօրններին. Համեմատելով մեծ Բրիտանիայի և Միացեալ Նահանգների զանազան դաւանութեանց պատկանող հոգևորականների դրութիւնը, ես դալիս եմ այն եզրակացութեան, որ թէ իւր հասարակական դրութեամբ և թէ իւր դրամական միջոցներով ամերիկական հոգևորականութիւնը մի քանի առաւելութիւններ ունի անգլիականից:

Թէև Ամերիկայի հոգևորականութեան ազդեցութիւնը դեռ շատ մեծ է, բայց և այնպէս նա արդէն փոխել է իւր բնաւորութիւնը և ենթարկուել հաւասարութեան ձգտող ընդհանուր հոսանքին: Տասն և իններորդ դարու սկզբին Նոր Անգլիայում պատօրնները համարեա նոյն հեղինակութիւնն ունէին, ինչ որ եպիսկոպոսներն արևմտեան Եւրոպայում վեցերորդ դարում, կամ պրեսվիտերեան հոգևորականութիւնը Շոտլանդիայում տասն և եօթներորդ դարում. մանաւանդ գիւղերում նրանք զեկավար և դաստիարակ էին իրենց ծխերի, իսկ քաղաքական ասպարիզում նրանց ազդեցութիւնը համարեա նոյն քան ուժեղ էր, որքան և հոգևորական շրջանակում²⁾:

1) Բապտիստների և մէթոդիստների հոգևորականները եկամուտն աւելի քիչ է (բացի մի քանի քաղաքներից), որովհետև այդ կազմակերպութիւններն միւսներից աւելի չունենոր են:

2) Մի քանի Նահանգներում սահմանազրութիւնը թոյլ չէ տալիս, որ հոգևոր կոչումն ունեցող անձերն օրէնսդրական ժողովի անգամ ընտուին: Ըներումն էլ հոգևորականութիւնը

Բայց այդ դրութիւնը բոլորովին փոխուեց: Հոգևորականը ցայսօր յարգանքէ վայելում իւր կոչման և կըրթութեան շնորհիւ¹⁾, բայց նա այլ ևս քաղաքական գործերին միջամտել չի կարող. նա՛ արտաքոյ իւր եկեղեցական ամբիօնի իրաւունք չունի: Նա այդ ազդեցութիւնը կարող է ձեռք բերել իւր անձնական ընդունակութիւնների շնորհիւ, միւս քաղաքացիներից տարբերուելով միայն նրանով, որ իւր կոչման շնորհիւ աւելի շատ գէպքերում կարող է արտայայտել այդ ընդունակութիւնները հրապարարակօրէն: Քաղաքական գործերին չը միջամտելու պարտաւորութիւնը հոգևորականների կողմից երբեմն խախտուում է: Հենրի Ուորդ Բիչերը 1884 թուին քաղաքական ասպարէզ դուրս եկաւ հասարակապետութեան նախագահ ընտրելիս որպէս (MURPHY) թեկնածու և նրա ընթացքը համարուում էր ապացոյց նրա քաջութեան՝ մանաւանդ այն պատճառով, որ Պլիմուտի եկեղեցու հետեւողները, որին և նա էր պատկանում, մեծաւ մասամբ համարուում էին հասարակապետութեան վճռական կողմնակիցների կուսակից: Նոյն թուին հոգևորականութիւնը շատ ազդու ցոյց արաւ յօգուտ Բլէնի: Կաթոլիկ եպիսկոպոսներին երբեմն մեղադրում են, որ նրանք գաղտնի պաշտպանում են այն քաղաքական

Նահանգների օրէնսդրական ժողովում անդամներ չունէր, սակայն երբեմն նիստերին ներկայ էր լինում: 1788 թուին Մասաչուզէտում արտասանած հրապարակական ճառերից մի քանի լաւագոյները, որոնցով պաշտպանեցին դաշնակցական սահմանադրութիւնը, պատօրններն արտասանեցին: Նոր Անգլիայում համարեա բոլոր պատօրնները յօգուտ այդ սահմանադրութեան ձայն տուին և միացան դաշնակցական կուսակցութեան:

1) Հոգևորականներն օգտուում են բազմաթիւ մանր արտօնութիւններով, նրանք յաճախ ձրի տոմսակներ են ստանում Երկաթաղիներով ճանապարհորդելիս, իսկ 1887 թուի սրտումը, որով արգելուեց առհասարակ ձրի տոմսակներով օգտուելը, հոգևորականները համար միայն թողեց այդ իրաւունքը՝ որպէս քայաւորութիւն:

կուսակցութիւնը, որը նրանց դպրոցներին և բարեգործական հիմնարկութիւններին դրամական նպաստներ է տալիս: Յամենայն դէպս կասկած չկայ, որ նրանք եռանդուն կերպով պաշտպանուած են կաթոլիկ ոգով սերունդ կրթելու իրաւունքը, բայց և այնպէս նրանք էլ են չեղոր մնում քաղաքականութեան միջամտելու գործում: Ամերիկացիք շատ դժգոհութեամբ կընայէին, եթէ հոգևորականները սկսէին միջամտել քաղաքական գործերին այնպէս, ինչպէս որ այդ անուամբ են տիրող եկեղեցու հոգևորականներն Անգլիայում և նրանց հակառակորդ՝ նոնկոմֆորմիստներին (անգլիական պետական եկեղեցի չընդունող) պատուորները: Հոգևորականութիւնը ազատորէն կարող է հանդէս գալ այն ժողովներին կամ համախմբումներին, որտեղ քննուում է որևէ բարոյական խնդիր. — օրինակ ստրկութիւն ոչնչացնելու, զգաստութեան ընկերութիւն հաստատելու և նման խնդիրներ:

Ի նկատի ունենալով, որ եւրոպական պետութիւններին և Միացեալ Նահանգների գլխաւոր տարբերութիւններից մէկն է կրօնական ասպարիզում աշխարհային իշխանութեան կատարեալ չեղօքութիւնը, եւրոպացի ընթերցողն անշուշտ կը կամենայ իմանալ, թէ ինչ գործնական հետեւանքների է հասցնում այդ տարբերութիւնը: Նա կասի. «Եւրոպացիք պնդում են, որ տէրութեան մէջ պետական եկեղեցու բացակայութիւնը կը հասցնէր երկու կորստաբեր հետեւանքի. — առաջինը որ՝ կրօնը կը կորցնէր իւր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը. և երկրորդ՝ — հոգևորականները կը կորցնէին իրենց եկամուտները և ունեցած հասարակական գիրքը: Նրանք իսկապէս կը դառնային ռամիկներ, իսկ լուսաւորութեան այն կեդրոնները, որոնք այժմս գոյութիւն ունին իւրաքանչիւր գիւղական համայնքում, կ'անյայտանային: Ընդհակառակն «ազատ պետութեան մէջ ազատ եկեղեցու պաշտպաններ» մեզ խոստանում են հետեւեալ երկու բարերար հետեւանք. — նախ, որ զանազան ազանգների մէջ փոխադարձ քէնն ու ատելու-

թիւնը վերանում է, և երկրորդ՝ — նրանք պնդում են, որ հոգևորականութիւնը իւր բնաւորութեամբ և գաղափարներով աւելի կրօնական կը դառնայ և առաւել եռանդուն կերպով կը սկսի զբաղուիլ իւր գլխաւոր պարտականութեամբ՝ — բարոյական վերածնութիւն պատուաստելու և իւր ծխականներին հոգևոր սնունդ հայթայթելու գործով: Այս չորս գլխաւոր կէտերի վերաբերութեամբ ինչ ցուցումն է տալիս ամերիկացիների փորձը»:

Ամերիկայի կրօնական կեանքի մասին գաղափար կազմել ցանկացող իւրաքանչիւր անձի կողմից այնքան տեղի են այդ հարցերը, որ ես չեմ կարող չեղուել պարտականութիւնիցս և չպատասխանել նրանց, չնայելով որ ես չէի կամենայ շօշափել այնպիսի առարկան, որին Եւրոպայում տեղի ունեցող ընդհարումները վիճելի կերպարանք են տալիս:

Կրօնի ազդեցութիւնն ու հեղինակութիւն չափելը բոլորովին դիւրին բան չէ: Սակայն մենք կարող ենք գաղափար կազմել Միացեալ Նահանգների ազգաբնակչութեան վրայ կրօնի ունեցած ազդեցութեան մասին, եթէ ի նկատի առնենք, թէ ինչպէս հասարակ ժողովուրդը եկեղեցի է յաճախում և առնում կրօնական բովանդակութիւն ունեցող գրքեր, թէ որպիսի յարգանքով են վերաբերում կըրթուած վարդապետութեան և նրա հոգևորականներին, թէ որքան ուժեղ է աստուածաբանական խնդիրների յարուցած հետաքրքրութիւնը և թէ որքան մեծ է մարդասիրական բարեփոխութեանց և կրօնի գահը:

Որովհետև ես մտադիր եմ շօշափել այդ խնդիրները հետեւեալ գլխում, ուստի այժմս կը բաւականանամ միայն նկատելով, որ ոչ թէ թուով, այլ և կրօնի ազդեցութեան հպատակուող և ենթարկուող մարդկանց քաղաքակրթական աստիճանն աչքի առաջ ունենալով, կարելի է ասել, որ այդ ազդեցութիւնը Միացեալ Նահանգներում առաւել ուժեղ է, քան եւրոպական ցամաքի որևէ մասում և նոյն իսկ Անգլիայում: Կասկած չկայ, որ Ֆրանս-

սիայում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայի կաթոլիկ երկիրներում և Աւստրիային պատկանող գերման գաւառներում կրօնի հեղինակութիւնը ժողովրդական մասսաների վրայ մեծ է. նրա ազդեցութիւնը հասարակութեան ամենազարգացած մասի և առհասարակ բոլոր խաւերի վրայ Ֆրանսիայում աւելի պակաս ուժեղ է քան Իտալիայում, քան Մեծ-Բրիտանիայում և կարծում եմ աւելի պակաս ուժեղ է քան Միացեալ Նահանգներում: Այս բանում Շոտլանդիան միւսներից շատ աւելի է նման Ամերիկային, որովհետեւ այնտեղ ժողովրդական մասսան աւելի մեծ իրաւունքներ ունի եկեղեցական կառավարութեան մէջ, իսկ ազգաբնակչութեան բոլոր դասակարգերի շահերը եկեղեցական վերակազմութիւնից (реформация) սկսած միշտ համերաշխ են եղել — եկեղեցական շահերին: Միացեալ Նահանգներում կրօնը՝ մարմնաւոր իշխանութիւնից նպաստ չըստանալով, ոչ թէ միայն ոչինչ չի կորցնում, այլ ընդհակառակն աւելի անդրդուելի է թւում, որովհետեւ իւրաքանչիւրի համար պարզ է, որ նա պահպանում է իւր սեփական ուժերով, քաղաքական ոչ մի կուսակցութիւն, ազգաբնակչութեան ոչ մի դասակարգ թշնամական տրամադրութիւն չունի դէպի քրիստոնէութիւնը, կամ կրօնական որ և է կազմակերպութիւն: Եկեղեցիք նոյնչափ ժողովրդական են (բառիս ամենալայն մտքով), որչափ Միացեալ Նահանգների և միւս հիմնարկութիւնները:

II Միացեալ Նահանգներում հոգևորականների սոցիալական և տնտեսական կացութիւնը աւելի բարձր է կաթոլիկ երկիրների հոգևորականների դրութիւնից, քան անգլիական և նօնկոմֆորմիստ եկեղեցիների հոգևորականների վիճակը Անգլիայում: Ամերիկական պատուօրներից ոչ մինը երբէք այնպիսի եկամուտներով չի օգտուում՝ ինչպէս անգլիական և ունգարական բարձրաստիճան հոգևորականները, բայց ընդհանրապէս ամերիկական պատուօրների ստացած եկամուտների միջին թիւը շատ աւելի

բարձր է միւս տեղերից: Միւս կողմերից ամերիկական հոգևորականներին չի կարելի համեմատել անգլիականի հետ, որովհետեւ Անգլիական եկեղեցին միւսների վրայ շատ բարձրից է նայում: Իրենց կրթութեամբ և բարբրով, ժողովրդի մէջ կրթութիւն տարածելու իրենց ընդունակութեամբ ամերիկական պատուօրները Ֆրանսիայի և Իտալիայի հոգևոր դպրանոցներում կրթուող հոգևորականներից (որոնք աւելի խիստ կաստայական պատկեր են կրում) բարձր են կանգնած և հաւասար են գերմանական և շոտլանդական բողոքական պատուօրներին:

III Ամերիկայում համարեա գոյութիւն չունի այն փոխադարձ անբարեացակամութիւնը, որն առաջ է գալիս զանազան դաւանութեանց պատկանող հոգևորականութեան սոցիալական դրութեան տարբերութիւնից: Այնտեղ տարբեր դաւանութիւններին պատկանող և նոյն իսկ կաթոլիկ հոգևորականութեան մէջ աւելի ընկերսիրութիւն է նկատուում և ընդհանուր ուժերով բարեգործական նպատակներին ծառայելու պատրաստակամութիւն, քան Ֆրանսիայի և Գերմանիայի բողոքականների և կաթոլիկների մէջ, կամ քան անգլիական և նօնկոմֆորմիստ հոգևորականների մէջ Անգլիայում: Այնտեղ գլխաւոր դաւանութիւնները մրցում են իրար հետ իրենց ազդեցութեան շրջանն ընդլայնելու, նոր եկեղեցիներ կառուցանելու, եկեղեցական բարեկարգութեան համար նուէրներ հաւաքելու գործում: Բայց դա — բարի մրցումն է, որը երբէք արիւն չի պղտորում, որովհետեւ Նահանգները չեզոք են և բոլոր եկեղեցիներին կատարեալ ազատութիւն է տրուած: Ամերիկայում բացառիկ իրաւունքներ ձեռք բերելու ճշգրտումն շատ աւելի հազուադէպ է քան ուրիշ երկիրներում, դուրսէ միայն բացառութեամբ Շոտլանդիայի: Նրան իբրև ապացոյց ծառայում է որպէս ամբիօնների փոխանակութիւնը, այնպէս էլ այն, որ ամերիկացիք յաճախ մի դաւանութիւնից միւսն են անցնում, եթէ միայն նրանց գրաւում է պատուօրի անձնաւորութիւնը, կամ եթէ նրանք

վերաբնակուում են այնպիսի մի տեղ, որտեղից նրանց եկեղեցին հեռու է: Յաճախ պատահում է, որ միևնոյն ընտանիքի անդամները տարբեր դաւանութեան են պատկանում: Մանաւանդ պրեսվիտերեաններն ու կոնգրէգացիօնալիտները, որոնց դաւանութիւնը համարեա թէ նոյն է, յաճախ խնայողութիւն անելու համար պայմանաւորուում են երկու եկեղեցի չը շինել այնտեղ, ուր մի եկեղեցին բաւական է, և միացնել երկու դաւանութեան հետեւողներին էլ:

IV՝ Նախորդ երեք հարցերին պատասխանելը համեմատաբար աւելի դիւրին է, քան ցոյց տալ, թէ արդեօք իրականապէս և ինչ չափով քրիստոնէական եկեղեցու հոգևոր մաքրութիւնը և արժանապատուութիւնը օգուտ ունեցան մարմնաւոր իշխանութիւնից անկախ լինելուց:

Հոգևոր շահը կայանում է փոխադարձ նախանձի վերացման և զանազան դաւանութեանց պատկանող հոգևորականների փոխադարձ չարակամութեան պակասելու մէջ, դա հետեանք է այն բանի, որ օրէնքի առաջ ամենքը հաւասար են, իսկ եկեղեցական խնդիրները քաղաքականի հետ շփոթելու սովորութեան բացակայութիւնը՝ հակառակ եւրոպական սովորութեան, վերացնում է հակառակորդների միջից փոխադարձ հայհոյանքի առիթները: Եկեղեցական ժողովները, սինօդները, խորհրդածութիւններն ու դաշնակցական նիստերն այնպիսի վայելչութեան և խելացիութեան կերպարանք ունին, որի նմանը ես Հին Աշխարհում երբեք չեմ տեսել՝ սկսած Եփեսոսի ժողովից՝ մինչև մեր օրերը: Բայց Ամերիկայումն էլ ինչպէս և ամեն տեղ, երբեմն երիտասարդ մարդիկ կղերական ասպարէզ են մտնում աշխարհային միասուններով, աշխարհականներից մի քանիսը այս կամ այն եկեղեցու ծոցն են մտնում իրենց հասարակական գրութիւնը լաւացնելու, կամ հէնց իրենց գործերն ուղղելու համար, գիւղական պատուօրններից մի մասը որոնում է քաղաքային ծխեր, իսկ չբաւոր ծուխը փոխելով հարուստի հետ, արդարանում են նրա-

նով, որ նրանց գրաւում է օգտակար գործունէութեան աւելի ընդարձակ ասպարէզ: Որ և է եկեղեցու կամ դաւանութեան ազդեցութիւնն աւելի ընդարձակելու ճշգտումն յաճախ տեղի ունի աւետարանական վարդապետութիւնն աւելի տարածելու նպատակով, իսկ այդ վարդապետութիւնն երբեմն քարոզում է, եթէ ոչ «յօգուտ որոշ անձանց», գոնէ այնքան էլ եռանդուն կերպով մտնացոյց չեն լինում այդ անձերին անախօրժ ճշմարտութիւնների վրայ, որը պահանջում է հօտի բարոյական առողջութեան համար:

Որքան ես համոզուել կարողացայ պատուօրի ծխականներից ունեցած նիւթական կախումն երբեք չի ստորացնում նրան ժողովրդի աչքում և նրան չի հարկադրում, որ հարուստների առաջ աւելի խունկ ծխի, քան ինչ որ անում են որ և է պետական (իշխող) եկեղեցու հոգևորականները: Եթէ պատուօրն իրեն արժանաւայել կերպով է պահում և շահախնդիր չէ, այդ դէպքում նրա ինքնուրոյնութիւնը ոչնչով չի վտանգուիլ: Բայց եկեղեցու համար դժուար է վճռել, թէ հոգևորականներին կամաւոր տուրքերով պահելը որքան է պահանջում եկեղեցու մաքրութիւնից և ազատում արտաքին փաստակար ազդեցութիւններից: Այն ամերիկացիք, որոնց ես դիմեցի տեղեկուներից՝ համար, միաձայն հաստատում էին, որ այդ թիւնների համար, միաձայն հաստատում էին, որ այդ դէպքումն էլ ազատութեան հետեանքը փրկարար է եղել:

ԿՐՕՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Տալ որոշ հասկացողութիւն կրօնի բնաւորութեան և տիպիքական առանձնայատկութիւնների մասին Ամերիկայում և դնահատել նրա ազդեցութիւնը՝ որպէս բարոյական և հոգևոր ոյժի՝ անհամեմատ աւելի դժուարին է, քան պատկերացնել ամերիկական եկեղեցական սփերայում տեղի ունեցած աչքի ընկնող երևոյթները: Ես

այս խնդրին ձեռք եմ զարկում մեծ անվտանգութեամբ
դէպի սեփերս և կը բաւականանամ հատուածօրէն առաջ
բերելով այն պատասխանները, որ ես տուածս հարցերի
դէմ ստացայ հեղինակաւոր անձերից, որոնք պատկանում
էին զանազան եկեղեցիներին, կամ ոչ մի եկեղեցի չէին
ընդունում:

Մեր առաջագրած նպատակի համար ակներև նշա-
նակութիւն ունի այն հարցը, թէ ժողովուրդն ինչ աստի-
ճանի հնարաւորութիւն ունի ժամերգութեան ներկայ
լինելու և ինչ չափով է օգտուում նա այդ հնարաւորու-
թեամբ: Այս մասին փոքրի շատ է ճշգրիտ վիճակագրա-
կան տեղեկութիւններ ստանալն ըստ երևոյթին դիւրին
գործ չէ, սակայն ճանապարհորդը իւր սեփական դիտու-
թիւններով կարող է բաւական պարզ դադափար կազ-
մել այդ մասին: Եկեղեցիներ ամեն տեղ կան և այն՝
բաւարար թուով — թէ քաղաքներում և թէ գիւղերում,
թէ հիւսիսում և թէ հարաւում, նոր Անգլիայի խա-
ղաղ անկիւններում, և աւաններում, որոնք արագու-
թեամբ հիմնարկուում էին երկաթուղու գծերի մօտերքին
և արևմուտքում: Նրանք փոքրաթիւ են Միացեալ Նա-
հանգների մի միայն ամենավայրենի անկիւններում և
մանաւանդ հանքարդիւնաբերական շրջաններում, սակայն
այդ պակասութիւնը ժամանակաւոր է, որովհետև, այս-
պէս կոչուած, «ընտանեկան քարոզիչների ընկերութիւնը»
առանց ժամանակ կորցնելու հնարաւորութիւն է տալիս
այդ նահանգների ամենաթափառական բնակիչներին ան-
գամ աստուածապաշտութեանը ներկայ լինելու: Փոքր քա-
ղաքներից շատերում կայ մի մի եկեղեցի հազար բնակչի
համար. այնպէս որ, երբ Դալտօնում և Օհիօ Նահան-
գում կար 40,000 բնակիչ, գոյութիւն ունէր և ուղիղ 40
եկեղեցի:

Կրօնական այլ և այլ կազմակերպութիւնների փոխա-
դարձ մրցումը նպաստել է եկեղեցիների արագ շինու-
թեան նոյն իսկ նոր բնակեցրած արևմտեան երկիրներում

և ընդհանրապէս ամեն տեղ ազդել է եկեղեցիների թուի
ածման վրայ:

Նոր բնակեցրած արևմտեան երկիրներում և ընդ-
հանրապէս ամենուրէք եկեղեցիների թուի աճման շատ է
նպաստել կրօնական այլ և այլ կազմակերպութիւնների
մրցումը: Տեղական բնակիչները երբեմն փոքր եկեղե-
ցիներ են պահում արժանապատուութեան զգացմունքից
դրդուած, մինչդեռ աւելի լաւ կլինէր, որ նրանք միա-
ցուէին նոյն դաւանութեան որ և է կազմակերպութեան:
Եկեղեցի յաճախողների թիւն ընդհանրապէս մեծ է:
Օտարականին պատմում են, որ միջակ մեծութիւն ունե-
ցող քաղաքներում և գիւղերում Ամերիկայում ծնուած-
ները գոնէ կիւրակէ օրերն եկեղեցի են յաճախում: Մեծ
քաղաքներում եկեղեցի յաճախողների թիւը համեմատա-
բար պակաս է, բայց թէ արդեօք նոյնքան փոքրաթիւ է,
որքան անգլիական քաղաքներում, ես ոչ ոքից իմանալ
չկարողացայ: Արևմուտքի ամենախիստ բնակեցրած տեղե-
րում եկեղեցի գնալու սովորութիւնը զարմացնում է ճա-
նապարհորդին. որովհետև այնտեղի ազգաբնակիւթիւնը
բաղկացած է գաղթականներից, ուստի կարելի էր կարծել,
որ նրանք տեղական սովորութիւններին շատ չեն հետևել:
Կալիֆօրնիան միայն ընդհանուր օրէնքից բացառութիւն
է կազմում. ինչպէս հաստատում են, այդ նահանգը
ամենից քիչ է ենթարկուում կրօնի ազդեցութեանը: Բայց
նրա գլխաւոր քաղաք Օրէգոնում, ինչպէս ինքս անձամբ
համոզուեցի, շատ խէթ աչքով կը նայէին այնպիսի պարո-
նին՝ և մանաւանդ այն տիկնոջը, որոնք քրիստոնէական
որ և է դաւանութեան չեն պատկանում և եկեղեցի չեն
յաճախում կանոնաւորապէս: Որ և է եկեղեցու չը հետե-
ւող կնոջը, ճիշտ է, հասարակութիւնից չէին հեռացնիլ,
բայց ակներև էլ կը խղճային և կը ցաւէին նրա համար,
իսկ բաւեկամները կ'աշխատէին համոզել, որ նա որ և է
եկեղեցու անդամների շարքը մտնէր:

Կիւրակէն սուրբ պահել կամ չը պահելը որպէս չափ

կարող է ծառայել ամերիկացուց կրօնասիրութեան: Թէև պուրիտանական կանոնների խստութիւնը նոյն իսկ Նոր Անգլիայումն էլ է անյայտացել, բայց և այնպէս Ամերիկայի գիւղացիք՝ մանաւանդ հարաւում, կիւրակէ օրերը թէ զուարճութիւնից են խուսափում և թէ աշխատանքից¹⁾: Նոյնը չի կարելի ասել գերմանացիների մասին. նրանց օրինակին հետևելով, մի քանի տեղերի բնակիչները դարեացին կիւրակէ օրուայ զուարճութիւններից խոյս տալուց: Չիկագոյում, Ֆինցինատում, Նոր-Օրլէանում և Սան Պրանցիսկոյում բնակիչներն այնպէս չեն անցկացնում կիւրակէ օրերը, ինչպէս Նոր Անգլիայում, այլ աւելի շուտ

1) Կիւրակէն սուրբ պահելու վերաբերեալ օրէնքներէ հետաքրքիր տեսութիւնը կարելի է գտնել ամերիկական իրաւաբանների միութեան երրորդ տարեկան միտինգի ժամանակ շէնքե Իւնգի կարդացած յօդուածի մէջ (1880 թ.): Այդ տեսակ օրէնքներ, որոնք գոյութիւն ունին իւրաքանչիւր նահանգում, երբեմն շատ խիստ են լինում: Նրանք արգելում են ամեն տեսակ աշխատանք, բացի նրանից, որը կատարում է անհրաժեշտօրէն, կամ բարի գործ արած լինելու ցանկութեամբ, նրանք արգելում են ճանապարհորդել և ոչ մի զուարճութիւն թոյլ չեն տալիս: Վերմոնտ ու Վարոլինան այդ ուղղութեամբ ուրիշ նահանգներից առաջ են անցել: Վերմոնտի օրէնքներում առուած է, որ երկու դօլլարով տուգանւում է նա, ով որ բարեգործութիւնից դատ ուրիշ որ և է պատճառով կանցնի բնակարանից բնակարանը, ով որ կը ճանապարհորդի շաբաթուայ կէս գիշերից մինչև կիւրակէի կէս գիշերը, որ կը սարքի իրեն տանը, կամ կայցելի ուրիշ մօտ սարքած պարահանդէսը, ով որ կը զբօսատեղի՝ զուարճութեան կամ հանգստանալու ցանկութեամբ: Ինդիանայում, որտեղ կիրակնօրեայ աշխատանքն արգելուած է, դատարանը գտաւ, որ սիգար ծխելը ծխողներին՝ անհրաժեշտութիւն է: Հարաւային կարօլինայում հրատարակուած են բազմաթիւ նման որոշումներ, որոնցով իւրաքանչիւրին հրամայուած է սուրբ պահել կիւրակէն և վարժուել բարեպաշտութեան մէջ: Բայց այժմ այդ որոշումները գործնական վեանքում արդէն հնացած են և կատարուում են միմիայն աւել

Գերմանիայի կամ Պրանսիայի բնակիչների նման: Բայց և այնպէս ոչ մի տեղ խանութներ չեն բաց անում և ազգաբնակութիւնն իւր սովորական գործերով չի զբաղուում: Երկաթուղու գծերից շատերի վրայ կիրակնօրեայ գնացքները շատ քիչ են, իսկ շատ քաղաքներումն էլ նոյն իսկ թանգարաններն էլ են փակում: Բայց միւս տեսակէտից կիւրակէն սուրբ պահելու սովորութիւնը Ամերիկայում աւելի թոյլ է՝ քան Անգլիայում: Համարեա բոլոր գլխաւոր թերթերը հրատարակում են կիրակնօրեայ համարներ, որոնք՝ բացի օրուայ նորութիւններից, բովանդակում են նաև փոքրիկ պատմութիւններ թեթև ընթերցանութեան համար, իսկ մեծ քաղաքներում կիւրակէ օրերը թատրոնները բացուում են երեկոյեան ներկայացումների համար¹⁾:

Այժմս Նոր Անգլիայում ժողովրդի հետաքրքրութիւնը գէպի աստուածաբանական հարցերն այնքան ուժեղ չէ, ինչպէս որ սրանից հարիւր տարի առաջ էր, բայց հասարակապետութեան սկզբից առաւել ուժեղ է՝ քան թէ Անգլիայում: Սովորական ընտանիքներում ընթերցասիրութիւնը գլխաւորապէս կրօնական կերպարանք է կրում. նա գոհացուած է կրօնական կամ կիսակրօնական թերթերով, որոնք լոյս են տեսնում շաբաթական կամ ամսական մի անգամ: Արևմտեան երկրներից դեռ շատերում երկրագործ կալուածատէրերի և խանութպանների շրջա-

լորդ աշխատանքի վերաբերութեամբ: Այդ չափով հասարակական կարծիքը խրախուսում է կիրակնօրեայ հանգիստը և օգտակար է համարուում՝ ոչ այնքան կրօնական, որքան ընկերվարական և անտեսական տեսակէտից:

1) Պատմում են, որ ներկայումս սովորութիւն է դարձել օպերային կամ դրամատիքական դերասանական խմբի անգամներին վաճել շաբաթով. (այդպիսի խմբերը յաճախ ճանապարհորդում են Ամերիկայի Միացեալ Նահանգներում). առաջ այդ խմբերն իրենց ներկայացումները սկսում էին երկուշաբթի օրուանից, իսկ այժմ սկսում են կիւրակէ երեկոյեց:

նում դեռ էլի քննութեան են առնում ճակատագրի (նախասահմանում) վերաբերեալ խնդիրները նախկին եռանդով, որը շատ տխուր կնիք է դնում նրանց կրօնի ըմբռնողութեան վրայ: Ամերիկացի ուսմիկը անգլիացուց լաւ դիտէ Աստուածաշունչը և շատ աւելի արագ է ըմբռնում նրա վերաբերեալ ակնարկներ, բայց շտաղանդացի գիւղացուց հազիւ թէ գերազանց լինի: Պէտք է ասել, որ ես միանգամից նկատեցի, որ ամերիկացիք կրօնի վերաբերեալ խնդիրներու մասին շտաղանդացիների նման են, քան անգլիացիների, թէև իրենց մտածողութեան եղանակով աւելի անգլիացիների են նմանում, քան թէ շտաղանդացիներին: Եկեղեցական բնակից արտասանուող խրատական քարոզների մասին գաղափար կազմելը այնքան էլ հեշտ չէ, որովհետև քրիստոնէական դաւանութիւնների տարբերութիւնը բաւականին մեծ է: Ընդհանրապէս կարելի է նկատել, որ թէ կենդանիացիօնալիստների, թէ բապտիստների, թէ եպիսկոպոսականների և թէ պրեսվիտերիանների հոգևորականութիւնը իւր քարոզները առաջուայ նման բնազանցական բաներով չի բնութեան բնաւորութիւն: Այդ բանը քիչ է նկատուում հարաւային պրեսվիտերիանների մօտ, որոնք աւելի օրթոքոս են և առաւել պահպանողական, քան իրենց հիւսիսային եղբայրակիցները: Աստուածաբանական աւօրեայ խնդիրների քննութիւնը, որ Սուրբ Գրքի հեղինակութեան խնդիրը, բնական գիտութիւնների և Աստուածաշնչի բովանդակութեան յարաբերութիւնը, հանդերձեալ կեանքում վարձատրութեան և պատժի գոյութիւնը, ճիշտ նոյն ձևով է կատարուում, ինչպէս Անգլիայում: Գլխաւոր ամսագիրներն ու թերթերը այս խնդրի մասին տպում են յօդուածներ, որոնք Ամերիկայում աւելի շատ են կարդացուում, քան Անգլիայում, բայց որքան ես գիտեմ, այլ ևս իրենց վրայ չեն կեդրոնացնում կրթութեամբ հասարակութեան ուշք ու միտքը:

Արդեօք թերահաւատութիւնը չէ, որ տարածուում է ձեռք է բերում բազմաթիւ հետեւողներ, խախտելով դէպի Աստուած և հոգու անմահութիւն ունեցած հաւատը: Դա այնպիսի մի հարց է, որին մեր ժամանակ շատ դժուար է պատասխանել՝ նոյն իսկ սեփական հայրենիքի վերաբերութեամբ: Եւրոպական բոլոր երկիրներում քիչ չեն այն երեւոյթները, որոնք կամէք ցոյց են տալիս, որ թերահաւատութիւնը տարածուում է. բայց կան և երեւոյթներ, որոնք հակառակն են ապացուցանում: Այդպիսի արտակարգ նշանակութիւն ունեցող խնդրի մասին Ամերիկայի վերաբերութեամբ գրական կարծիք յայտնելը օտար երկրացու համար առաւել ևս դժուար է:

Անգլիան և Ամերիկայի Միացեալ Նահանգներն ըստ իս ընդհանուր շատ բան ունին, մի երկրում գոյութիւն ունեցող հոսանքները (տենդէնցիաները) երևան են դալիս և միւսում: Անգլիացուց և Ամերիկացուց մտածելու եղանակը նոյն է. նրանց կրօնական հիմնական հայեացքները նոյնն են, բացի այն տարբերութիւնից, որ ամերիկական բողոքականները համեմատաբար շատ քիչ են տրամադիր տեսանելի եկեղեցու հեղինակաւորութեան առաջ խոնարհուելու, նրանց աստուածաբանական գրականութիւնը միակերպ է: Ամերիկացուց հետ աստուածաբանական խնդիրների մասին վիճելիս անգլիացին երբէք չի զգում հայեցակէտի այն թեթեւ տարբերութիւնը, որը նա իսկոյն նկատում է Ֆրանսիացու, իտալիացու, կամ նոյն իսկ գերմանացու հետ նոյն խնդիրների մասին դատելիս: Շահագիտական պատճառաբանութեան կամ կրօնական զգացմունքների վրայ հիմնուած կարծիքներն անգլիացուց և ամերիկացուց աչքում միևնոյն կշիռ և նշանակութիւն ունին. այդ երկու ժողովրդի կրօնական զարգացումը հազիւ թէ տարբեր ուղղութիւն ընդունի: Եթէ անգամ նրանց մէջ որ և է տարբերութիւն կայ այդ բանում, այդ կայանում է նրանում, որ ամերիկացիք առաւել յաճախ և առանց քաջուելու լուծում են երկրոր-

դական խնդիրներ և անդլիացիներից աւելի ընդունակ են զսպելու իրենց անպայման մերժումից: Նրանք գիտեն լուրջ հայեացքներն արտայայտել հասկանալի ձևով, կամ ինչպէս ինձ ասաց ամերիկացիներից մինը, «նրանք ոչ թէ աշխատում են շարած տախտակների վրայով հեռու վազել, այլ — չընկնել այդ տախտակներից»:

Վերջին ժամանակներս կրօնական անհաւատութիւնը քարոզւում էր հրապարակական դասախօսութիւնների ժամանակ և վիրաւորական ձևով գրուած դրքոյկներով (պամֆլէտներով) այնպիսի ազատութեամբ, որը ծանօթ չէր Ամերիկացիներին նոյն իսկ երեսուն տարի առաջ. բայց թէ որչափ յաջողութիւն ունեցաւ այդ անհաւատութիւնը բանւոր դասակարգի մտածող մասի մէջ, դրա մասին իրար հակասող կարծիքներ կան: Իմ զննած վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ բողոքական եկեղեցիների անդամների թիւը 1800 թուին ընդհանուր ազգաբնակչութեան հետ համեմատած՝ կազմում էր ազգաբնակչութեան $\frac{2}{29}$ -ը մասը, կամ 29-ից երկու հոգի բողոքական էին. իսկ 1880 թուին 5-ից մէկը բողոքական էր: Նոյն հաշիւներից երևում է, որ հաղորդուողների թիւը 1880-ին հասնում էր 12,000,000-ի 25,000,000 չափահասներից: Սակայն միւս կողմից էլ գանդատներ են լսում, որ քաղաքների եկեղեցիներում աղօթողների թիւը պակասում է, իսկ եկեղեցական շրջաններումն էլ խորհում են, թէ ինչ ձևով կապեն ժողովրդական մասան եկեղեցու հետ: Ինչպէս ինձ թւում է, ընդհանրապէս կարելի է հասնել հետեւեալ եզրակացութեան: Նիւեօքթի և Չիկագօ-ի նման քաղաքներում ժողովրդի ստորին խաւերի անդամները (բացի կաթօլիկներից) նոյն ձևով անհաւատ են, ինչպէս և Լօնդոնում, Լիվերպուլում, Բերլինում: Իսկ որ և է կրօնական խմբակցութեան պատկանող բանուորների թիւը 30,000-ից մեծ ազգաբնակչութիւն չունեցող քաղաքներում աւելի մեծ է՝ քան Մեծ Բրիտանիայի և Գերմանիոյ նոյնանման քաղաքներում:

Ամերիկական մեծ քաղաքների կրթուած շրջաններում, ինչպէս և Անդլիայումն է, քիչ չեն այնպիսի անձինք, որոնք հեռացել են քրիստոնէութիւնից, իսկ փոքր քաղաքներում, ինչպէս պատմում են, կան բազմաթիւ մարդիկ, որոնք հետևում են կրակապաշտութեան և որոշուած տեղերում ժողովուում են դասախօսութիւններ լսելու: Սրանից 50 տարի առաջ առաջին կարգի մարդիկ առաւել սակաւաթիւ էին և զուսպ, իսկ երկրորդինը — հազիւ թէ գոյութիւն ունեցած լինին: Բայց բողոքական օրթօդաքսութեան թուլանալը չի թուլացրել ոչ զանազան եկեղեցիների մրցումն ու եռանդը և ոչ էլ նրանց՝ հաւատացեալների վրայ ունեցած ազդեցութիւնը և ոչ նրանց քրիստոնէական հիմնական դաւանաբանական սկզբունքների հետ ունեցած կապը:

Բարեբախտաբար այդ կապն ու մրցումն այլ ևս չեն արտայայտում կրօնական անհամբերողութեամբ: Բացի արևմտեան և հարաւային կողմում եղած բնակչութեան փոքր կեդրոններից, որտեղ հետևողներ գտնելու տքնողների սկիզբունքականութիւնը (քննադատական ուսումնասիրութիւնը) տրտունջ յառաջ կը բերէր և կարող էր քնասել քարոզիչների (սոցիալական) ընկերվարական դրութեան, Ամերիկայում, ճիշտ այնպէս, ինչպէս և Անդլիայում, իւրաքանչիւրը կարող է ունենալ իւր հայեցակէտը և ուղածին պէս արտայայտել այն: Քրիստոնէական եկեղեցիներն էլ իրենց կողմից աշխատում են թուլացնել իրենց դրամ վճարելու պահանջները հոգևորականութեան պահպանութեան համար: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հերձուածի վերաբերեալ գործերի քննութիւնը վերապահուած է և քննւում է եկեղեցական դատարաններում: Քաղաքացիական դատարանը միայն այն դէպքերում կը քննէր այդ գործերը, երբ որ և է մէկը բողոքով դիմէր նրան, որ եկեղեցական դատարանի կամ եկեղեցական իշխանութեան վարչական կարգադրութիւնը խախտում է նրա քաղաքացիական իրաւունքները, կամ նրա հետ կա-

յացրած դաշնագիրը ¹⁾։ Այսպիսի մեղադրանքներ յաճախ են տեղի ունեցում, սակայն հասարակութեան համակրանքը սովորաբար աւելի մեղադրուած եկեղեցականի կողմն է լինում, իսկ հին առաջնորդող կանոններից թողարտուած շեղումները հետզհետէ նշանաւոր են դառնում։ Ներկայումս Ամերիկայի կոնգրէգացիօնալիստների (քահանայականների) եկեղեցին նոյն կանոններն ունի, ինչ որ սահմանուեցին Անգլիայում նոյնանման եկեղեցու համար։ Հիւսիսային պրեսվիտէրեաններէ, բապտիստների և մէթոդիստների եկեղեցիներում նոյն կարգերն ենք գտնում, ինչ որ ընդունուել է Ծօտլանդիայի պրեսվիտէրեան եկեղեցիներում։ Բայց ընդհանրապէս կարելի է նկատել, որ Ամերիկայում ոչ մի եկեղեցին այնպիսի ազատութիւն չի տալիս դոգմաների և ծէսերի պահպանութեան գործում, որպիսին վերջերս դատաստանական վճիռները տալիս էին Անգլիայի պետական եկեղեցու հոգևորականներին. սակայն ես չեմ նկատել, որ բողոքական դաւանութիւնների հոգևորականութիւնը Ամերիկայում իրեն ճնշուած համարէր իւր գործունէութեան միջոցին, կամ այնտեղ արդելը ղնէին կրօնական գազափարի զարգացման առաջ. բացառութիւններ գտնում ենք մի միայն հարաւային Նահանգներում, որտեղ սղղափառութիւնը բաւական խստապահանջ է և հոգևորականներին արգելում է մարդու ծագման մասին Գարվինի հայեցակէտն ունենալ։ Այն պատարը (լուտերական հովիւր), որը սկսում է ճնշուել իւր գաւանութեան կարգերով կամ ծէսերով, սովորաբար անցնում է այն եկեղեցու հոգևորականների շարքը, որտեղ իրեն նոյնչափ աղատ է զգում, որչափ իւր սեփական

1) Այս ձեով քննուում են և այն դէպքերն, երբ եկեղեցական դատարանը խախտում է իւր սեփական կանոնները, կամ յայտնի կերպով շեղում է դատավարական սովորական եղանակից։

տանը։ Նա դրանով հասարակութեան մէջ իւր ունեցած վարկին երբէք այնքան վրաս չի տալ, որքան Անգլիայում անգլիական հոգևորականութեան անդամը՝ նոյն բանն անելիս։

Այն, ինչը որ կարելի է կոչել ամենօրեայ կրօնական կեանքն ու սովորութիւն, որոշ չափով տարբերում է Անգլիայի և Ծօտլանդիայի կրօնական սովորութիւններից, տարբերութիւններ, որոնց նկատելը գիւրին է, բայց բնութշէն ու նկարագրելը դժուար։

Կրօնական խնդիրների մասին խօսելիս Միացեալ Նահանգներում պայմանական պահանջներ կամ արգելքներն աւելի սակաւ են և աւելի աննշան է եկեղեցու ձևական տարբերութիւնը աշխարհական սֆերայից, աւելի թոյլ արամագրութիւն կայ հոգևորականներին առանձին (կաստա) դասակարգ համարելու և նրանից այն պահանջներն անելու, ինչ որ աշխարհականներից չի պահանջուում։ Սրբազան համարուած բաներին ձեռք չը տալու ջանքը և նոյն իսկ սրբազան իրերին առանձին ուշադրութեամբ վերաբերուելու գիտակցութիւնը աւելի պակաս չափով է աչքի ընկնում։ Ժողովրդից սիրուած որ և է եկեղեցու ունեցած բազկաթուռի տիրանալու իրաւանց հրապարակական աճրախօսութեամբ վաճառելը, թէ և ինչպէս կարծում եմ, հազուադէպ է, բայց Միացեալ Նահանգներում այնպիսի պարսաւանքի չի հանդիպում, ինչպէս Եւրոպայում։ Մի քանի նորաձև եկեղեցիներում կան գահաւորակներ, գորգեր և սալօնների սրիշ պարագայք։ Այդտեղ սովորաբար երգում է եկեղեցական վարժ խումբը, իսկ ծխականներն այդ խմբերին միացնում են և իրենց ձայնը, ենթագրելով, որ այդ ձևով չեն խանդարել հոգևոր երգերի կանոնաւոր երգեցողութիւնը։ Եկեղեցական կեանքի սօցիալական կողմն Ամերիկայի Միացեալ Նահանգներում աւելի է զարգացած, քան բողոքական Եւրոպայում։ Համախմբումները — մանաւանդ մէթոդիստների, բապտիստների և կոնգրէգացիօնալիստների (միութենականների),

ծառայում են գրականական, կրօնական, մարդասիրական և նոյն իսկ ժամանակ անցներու համար. որոնք ոչ միայն խրախուսում են բարեգործութիւն, այլ և միևնոյն ժամանակ մերձեցումն են առաջ բերում հարուստների և աղքատների մէջ. երիտասարդ մարդկանց հնարաւորութիւն են տալիս ժամանակն արդիւնաւոր կերպով անցկացնելու հաճելի հասարակութեան մէջ՝ այդ ձևով յետ պահելով նրանց վատ հակումներից: Ամսական մի անգամ լինում է երեկոյթ, ուր հաւաքում են առանց որ և է ձևականութեան՝ ամեն հասակի և ամեն դասակարգի մարդիկ ¹⁾: կրօնք Ամերիկայի Միացեալ Նահանգներում աւելի լաւ և համերաշխ է դնում երիտասարդութեան շահերի հետ և վերջին քառասուն տարիների ընթացքում աւելի մեղմ է իւր պահանջների մէջ՝ քան թէ Անգլիայում, կամ առնուազն անգլիական նօնկոնֆորմիստների, կամ շօտլանդական եկեղեցիների մէջ: Ամերիկական եկեղեցիների առանձնայատուկ և օրիգինալ կողմն է կազմում այն ձգտումն, որն արտայայտում է նրանցից մի քանիսի և մանաւանդ մէթոդիստների եկեղեցիների մէջ՝ դէպի հոգևոր վերածնութիւն: Ամերիկայում վաղուց արմատացել և սովորութիւն է դարձել կրօնական զգացմունքներն արտայայտելու հրապարակական տաք ցոյցեր կազմակերպելն ու կրակոտ քարոզներ տալը: Այնտեղ յաճախ բաց

1) Նոյն իսկ չի արգելում սարքել պարբերելոյթներ, սակայն ոչ բոլոր կոնգրէգացիաների կողմից: Մի քանի տարի սրանից առաջ բողոքական կոնգրէգացիան արեւմտեան քաղաքներից մէկում նշանակեց «ընդունելութեան օր» նոր եկեղեցական շինութեան բացման առթիւ. չէ՞ որ հարուստ եկեղեցիներից իւրաքանչիւրին կից առանձին շինութիւն կայ սալօնների ամբողջ շարքով. այն ժամանակ արեւելեան եպիսկոպոսական բողոքական եկեղեցիներից մինի կողմից եկած (sexton) ժամհարը, զիտելով ընդարձակ դահլիճը, բացականչեց. «Սիսոս, որ դուք եպիսկոպոսական չէք. այլապէս դուք այս դահլիճում խնջոյք կըսարքէիք:

երկնքի տակ, ծովի ափին կամ անտառում կազմակերպում են համախմբումներ՝ քարոզներ կարդալու, որոնք առաւօտուանից մինչև երեկոյ չեն ընդհատում, իսկ այդ համախմբումների մասին շրջող պատմութիւնները թէև միշտ նրանց օգտին չեն խօսում, բայց և այնպէս միաձայն կայում են, որ նրանք մեծ տպաւորութիւն են թողնում աւաքուած հասարակ ժողովրդի վրայ, թէև այդ տպաւորութիւնը լինում է անցողական: Արեւմուտքում այդպիսի ժամախմբումներն այն օգուտն են ունեցել, որ նպաստել աւետարանական վարդապետութեան տարածման այն աններում, որտեղ դեռ քիչ եկեղեցիներ կային: Արեւմուտքում և հարաւում այդպիսի համախմբումներ կազմակերպում են ժողովրդի հասարակ մասի և մանաւանդ՝ երի յաճախ նեղրների մէջ: Ամերիկացիք անգլիացիներից և շօտլանդացիներից աւելի են սիրում կրօնական նդէաները և կրօնական զգացմունքներ արտայայտելու մար ոչ ոքից և ոչնչից չեն քաշում: 1870 թուին ես ունեւում էի այն բազմաթիւ գեղեցիկ շոգենաւերից մինի նապարհորդների շարքերում, որոնք երթնեկում են Նիւ-Իօրկի և Փօլլ-Րիվերի մէջ: Նիւ-Իօրկում հրաւիրուած ունիթոռների համաժողովը և այդ նպատակով մի ումբ ունիթոռներ Նոր Անգլիայից գնում էին այնտեղ: Ետքէ նկատել, որ Նոր Անգլիայի ունիթոռները միւս ամերիկացիներից աւելի ծանրաբարոյ և չափաւոր են րենց սովորութիւնների մէջ և միւսների պէս արամադիր են իրենց կրօնական համոզմունքների արտայայտութեանը ոյցի կերպարանք տալու: Բայց և այնպէս այդ խումբը րեղաւորուեց շոգենաւի ընդարձակ դահլիճում՝ դաշնաւորի առաջ և համարեա ամբողջ երկու ժամ երգում էր իննութիւններ: Միւս ճանապարհորդներից շատերը միաւան այդ լամբին, իսկ մնացածներն համակրանքով էին իրարերում երգողներին: Իմ ճանապարհորդակից անգլիացիները սկիզբում կարծում էին, որ երգողները պատանում են մէթոդիստների որ և է խմբակցութեան, բայց

երևաց, որ նրանք ունիթոուներ էին: Ամերիկան այցելող եւրոպացիք մի բանում շատ էին չափազանցացնում: Եւրոպայի ցամաքային տէրութիւնների և Միացեալ Նահանգների տարբերութիւնը: Նրանք պնդում էին, որ Միացեալ Նահանգներում աւելի յաճախ են երևան դալիս տարօրինակ աղանդներ և կրօնական այլանդակ վարդապետութիւններն այնտեղ իրօք գոյութիւն ունին, բայց նրանք ամերիկացիների կեանքում երբէք աւելի մեծ դեր չեն խաղում, քան նոյնանման աղանդներն Անգլիայում և Գերմանիայում և աւելի պակաս՝ քան անդաւրոնները՝ Ռուսաստանում: Մորմոններն ամբողջ աշխարհի ուշադրութիւնը նրա համար դարձրին իրենց վրայ, որովհետև փորձեցին կրօնական հասարակապետութեան նման մի բան հիմնել և վերահաստատեցին այն հին սովորութիւնը, որը դատապարտւում է բարոյականութեան մասին գոյութիւն ունեցող ժամանակակից հասկացողութեամբ: Բայց մորմոնների կրօնական համայնքն իրեն հետեւողներ է գտնում գլխաւորապէս Եւրոպայից գաղթողների մէջ. Աղի լճի քաղաքում ամերիկացիք շատ քիչ են և եղածներն էլ պատկանում են հարաւային ազգաբնակչութեան խեղճ մասին¹⁾: Կիպկերները հետաքրքիր և լաւ կազմակերպուած համայնք են կազմում, բայց շատ սակաւաթիւ են, իսկ միւս կրօնաւորները (անպայման հաւատարութիւն և անձնական սեփականութիւն չընդունող) կրօնական ընկերակցութեանց մասին Եւրոպայում շատ աւելի յաճախ ենք լսում, քան թէ Ամերիկայում: Երբեմն այստեղ և երբեմն այնտեղ երևան է դալիս փոքրաթիւ հետեւողներ ունեցող որ և է աղանդ և մի քանի տարուց յետոյ անյայտանում է²⁾:

1) Հարաւային Նահանգներէց մի քանիստ պատիժներ են նշանակուած մորմոնականութիւն քաղցելու համար:
 2) Վաշինգտօնի Նահանգում Վալլա-Վալլայից ոչ հեռու եւ ծանօթացայ մի վալիսցու հետ, որը հասնում էր մոլեգնութեան, արտասանում էր խորհրդաւոր խօսքեր և այդ յայտա-

Բայց այնպիսի երկրում, ուր ազգաբնակչութիւնը դիւրութեամբ յափշտակուած է կրօնական հանդէսներով և տրամադիր է դէպի ամեն տեսակ փորձութիւններ, ճանապարհորդն աւելի զարմանում է, որ այդ ազգաբնակչութիւնը մինչև ցայսօր հին ձեւերին է հետևում:

Բոլոր սուածներից երևում է, որ քրիստոնէութիւնը Միացեալ Նահանգներում պահպանել է իւր հեղինակութիւնն ու արժանաւորութիւնը, որ նա ամբողջ երկրում կառուցանում է եկեղեցիներ և իւր հետեւողներից հաւաքում ահագին եկամուտներ: Սակայն կարելի է կարծել, որ արտաքին ազդեցութիւնը հիմնուած է հին սովորութիւնների վրայ և չի միանում մարդկային հոգիների վրայ իշխելու դադափարի հետ: Օգոստոս կայսրի ժամանակ հռովմէական կայսրութիւնը մի ծայրից մինչև միւսը լի էր հրաշալի տաճարներով, որոնք շինուած էին ի պատիւ բազմաթիւ աստուածների, հոգևորականութիւնը բազմաթիւ էր, հարուստ և օգտւում էր պետական հովանաւորութեամբ: Կրօնական հանդէսներն աչքի էին ընկնում նախկին շուքով, իսկ զահաբերութիւնը գրաւում էր ոգևորուած երկրպագուների ահագին խմբեր: Բայց հին կրօններն այլ ևս ազդեցութիւն չունէին ոչ կրթուած դասի հաւատալիքների վրայ և ոչ էլ ազգաբնակչութեան բոլոր դասակարգերի խղճի վրայ: Այդ պատճառով եթէ մենք ցանկա-

ւորում որպէս Աստուածային յայտնութիւն: Նա երկու զաւակ ունէր, որոնցից մինը նրա կարծիքով Քրիստոսի մարմնացումն էր, իսկ միւսը Յովհաննէս Մկրտչի: Նա կարողացաւ յիտուն հետեւող դասել և նրանցից աշխատում էր առանձին համայնք կազմել, որտեղ ամեն ինչ համարուէր ընդհանրութեան սեփականութիւն, բայց չըկուէց երկու զաւակներից էլ, իսկ 1881 թուին շուրջ աշակերտները թողին նրան: Հաւանականաբար այդպիսի երևոյթները հազուադէպ չեն. արեւմտեան մասի սակաւաթիւ ազգաբնակչութեան և Եւրոպայից գաղթածների մէջ նախապաշարմունքը շատ ուժեղ է: Չէ՞ որ այդ մարդիկն ապրում են ամենալիւս և դեղեցիկ ընտելութեան ծոցում:

նում ենք գիտենալ, թէ ինչ տեղ է բռնում քրիստոնէութիւնը Միացեալ Նահանգներում՝ և ինչ չափով է նպաստում հասարակապետութեան հաստատութեան, մենք պէտք է քննենք, թէ ինչ չափով է նա ղեկավար հանդիսանում ամերիկացուց կեանքի և ազգում նրանց մտքերի վրայ։ Այդպիսի քննութիւնը պէտք է ունենայ երկու նպատակ։ Նա մեզ պէտք է պարզի, թէ ինչ նշանակութիւն ունի քրիստոնէական կրօնը Ամերիկայի ժողովրդի վարք ու բարքի՝ բարոյական օրէնքների վրայ, և ինչ ձևով է այդ ժողովուրդը համակերպում այդ ազգացութեանը։ Երկրորդ նա մեզ պէտք է պարզի, թէ քրիստոնէական կրօնը ինչ չափով է բարբոքում ժողովրդի երեակայութիւնը, ոչնչացնում նրա աւօրեայ կեանքի վատ կողմերը և լուսաւորում նրա հոգին ճշմարտութեան լուսով։

Բարեգործութեան մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներից ոչ թէ ոչ մի երկիր չի դերազանցել, այլ և նրան հաւասարուել չի կարողացել։ Ոչ թէ զանազան մարդասիրական նպատակներով հաւաքուած դումարներն են խոշոր-եւրոպականից, (ի հարկէ Միացեալ Նահանգների հարըստութեան հետ համեմատած), այլ և բարեգործութեան նպատակին հասնելու ճիգերը Եւրոպացու աչքին միշտ աւելի գերազանց են, քան նրա՝ իւր հայրենիքում տեսածները։ Հնար չկայ վճռելու և որոշելու, թէ նրանք՝ այդ ճիգերը ուրքան զօրեղ կլինէին, եթէ դոյութիւն չունենային կրօնական խթանները՝ մօտիւնները։ Թէ և ոչ բոլորը, սակայն ես համոզուած եմ, որ համարեւ այդ ամենը կատարւում է կրօնական մարդկանցից և ինչպէս իրենք են հաւատացնում՝ կրօնական պատճառներով։ Այդ կրօնական պատճառներն աւելի հազուադէպ դէպքերում ունին եղծական բնաւորութիւն՝ քան Անգլիայում, որովհետեւ, ինչպէս բոլոր աղանդաւորները, այնպէս էլ որոշ չափով կաթոլիկները պատրաստակամութիւն են ցոյց տալիս ընդհանուր ոյժերով բաղմաթիւ մարդասիրական ձեռնարկութեանց նպատակաւ յաջողութեանը։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ բարոյական այն կա-

նոնները, որոնցով ղեկավարւում են ամերիկացիներից շատերը, աւանդուած են քրիստոնէութիւնից և թեթեակի միայն փոփոխուած ամերիկական կեանքի ազդեցութեան շնորհիւ, որը բողոքական Եւրոպայի կեանքից՝ տարբեր է կազմակերպուել։ Սովորական ամերիկացին ուրիշ որևէ բարոյական կանոնների մասին ոչ մի հասկացողութիւն չունի, իսկ կրօնական վարդապետութիւնը, չընայեած որ աւելի անորոշ և պակաս դոգմատիքական (դաւանաբանական) է դարձել, ցայսօր նրան ծառայում է որպէս միակ ազդիւր, որից նրա կարծիքով բղխում են նրա հասկացողութիւնները՝ պարտքի և ազնիւ վարք ու բարքի մասին։ Պուրիտանական (ամենախիստ Պրեսվիտերեանները) վարդապետութեան ժամանակ երբեմն աչքի էր ընկնում գիտակցական և աւելի յաճախ անգիտակցական փարիսեցիութիւն, որովհետեւ այն ժամանակ ամենքն էլ պուրիտանականութիւն էին դաւանում, իսկ այն կանոնները, որոնց իրագործումը պահանջւում էր ոչ միայն հասարակական կարծիքով, այլ և օրէնքով, վեր էր այն ոյժերից, որին ընդունակ է մարդկային բնութիւնը։ Անտիսոմեանների¹⁾ մոլորութիւնները, որպիսիք առաջ սովորաբար վերագրւում են նրանց, շատ մեծ տրամադրութիւն ունին դէպի կրօնական էմոցիան (հանդէսները)։ Բայց ներկայումս ըստ երևոյթին ամերիկացիներին առաւել սակաւ կարելի է մեղադրել փարիսեցիութեան կամ կեղծաւորութեան մէջ, քան թէ ուրիշ բոլոր ազգերին։ Նրանց առաւել շուտով կարելի է մեղադրել դրա հակառակ պակասութեան՝ բարեսիրտ ներողամտութեան մէջ դէպի այն անբարոյական արարքները, որոնցից իրենք միշտ խորշում են ու զսպում իրենց։

Մեծ նշանակութիւն չի կարելի տալ այն փաստին, որ ամերիկացիների մէջ յանցաւորներն առաւել սակաւ են, քան օտար տեղերից եկած գաղթականների մէջ, որովհետեւ

1) Anti հակա, nomos-օրէնք. XVI դարու աղանդաւորներ էին, որոնք եւր թէ անարգում էին բոլոր օրէնքները։

այդ երևոյթը բացատրուում է նրանով, որ գաղթականներն Ամերիկայի ազգաբնակութեան ամենաչունեոր և ամենատեղէտ մասն են: Բայց եթէ մենք ինկատի առնենք այն գործողութիւնները, որոնք քրէական պատժի չեն ենթարկուում, այդ դէպքում մենք առայ կրքերենք այն մարդկանց ընդհանուր կարծիքը, որոնք երկար ժամանակ ապրել են թէ բողոքական եւրոպայում և թէ Ամերիկայում. այն որին կրկերաբերի ճշմարտախօսութեան, ժուժկալութեան, ընտանեկան կեանքի մաքրութեան¹⁾, քնքշութեան դէպք մանուկները և բարեսրտութեան՝ վարուեցողութեան միջոցին, Ամերիկայում գտնուածները բարձր են թէ անգլիացիներին և թէ ամերիկացիներին²⁾:

Այն մարդկանց մեծամասնութիւնը, որոնց կարծիքն վրայ ես մատնանիշ եմ լինում, ենթադրում է, որ կրօնական հաւատալիքները, որոնք երբեմն չեն կորցնում իւրեանց ազդեցութիւնը նրանցից հրաժարուած և ուրիշ դաւանութեան փոխուած մարդկանց բնաւորութեան վրայ, այս դէպքում մեծ ազդեցութիւն ունին և Միացեալ Նահանգներում աւելի գործոն ոյժ են կազմում, քան Անգլիայում և Գերմանիայում:

Եթէ մենք հարց տալու լինինք, թէ կրօնը ինչ աստիճանի զրդիչ ազդեցութիւն ունի մի ազգի երեակայու-

2) Մի քանի Նահանգներում յաճախ են ամուսնալուծութիւններ, մի քանի տեղ եօթից 'ի ամուսնութիւնը լուծուում է բայց այդ բարոյական անկումից չի առաջ դալիս, այլ բացատրուում է նրանով, որ օրէնքով թէ կնոջը և թէ մարդուն մեծ ազատութիւն է տրուած իրենց հաճոյքներին բաւականութեամբ տալու գործում: Ամուսնալուծութիւններն, ինչպէս ինձ պատմել են, աւելի հազուադէպ են բարձր և միջին դասակարգերն՝ քան հասարակ ժողովրդի մէջ:

1) Նոյնը չի կարելի ասել առևտրական ազնուութեան մասին: Միացեալ Նահանգներն Անգլիայից և Գերմանիայից բարձր չեն և համարեա թէ ցածր են Ֆրանսիայից և Սկանդե-նաւիայից:

թեան և ժողովրդութեան եղանակի վրայ, մենք ստիպուած կլինինք յաղթել այն դժուարութեանը, որ մենք անկարող ենք զազափար կազմել մարդկային ցեղի այնպիսի դրութեան մասին, որն առանց կրօնական ազդեցութեան է կառավարուում: Գեռ ոչ մի ժամանակ գոյութիւն չի ունեցել ոչ մի քաղաքակիրթ ազգ առանց կրօնի և թէև սակաւ չեն բարձր կրթութեան տէր մարդիկ, որոնք ապրում են առանց կրօնի, բայց այդ մարդիկ ըստ երևոյթին հետեանք են զգացմունքների և մտքերի այնպիսի տրամադրութեան, որի ժամանակ կրօնը ամենազօրեղ գործոն է եղել: Ահա այս պատճառով ոչ մի հնարաւորութիւն չկայ ենթադրաբար զազափար կազմելու, թէ մարդիկ ինչ կըդառնային, եթէ սովորէին իրենց բարձր կարգի էակներ համարել և դադարէին հաւատալ, որ իրենց սպասում է հանդերձեալ կեանքը:

Գուցէ ասողներ լինին, որ յարգանք դէպի հասարակական կարծիքը և մարդկութեան ազադայի հոգսը կը փոխարինէր այդպիսի մարդկանց համար այն, ինչ որ կրօնն էր կազմում. կամ որ այն ժամանակ մարդիկ առաւել բազդաւոր կլինէին, որովհետև կըդադարէին երեակայական սարսափներին հաւատալուց: Կլինին նաև ասողներ, որ այդ դէպքում կեանքը շատ նեղ և շնչին կերևար, իսկ մարդկային երեակայութեան համար ոչ մի ասպարէզ չէր մնալ: Ինչ ամերիկացիներին կրկերաբերի, շատ քիչ են նրանց պատմական այն յիշատակները, որոնք ընդունակ են դրդուելու ժողովրդական երեակայութիւնը, իսկ նրանց եռանդը ծախսուում է զլիստորապէս երկրի նիւթական միջոցներն աւելացնելու և զարգացնելու վրայ. այս պատճառով նրանց աւելի է հարկաւոր կրօնը, քան թէ ուրիշ որ և է ժողովրդին, որպէս զի ընդարձակի նրանց աշխարհայեացքը և հարկադրի, որ նրանց երեակայութիւնը նիւթական հոգսերի նեղ շրջանակից փոխադրուի հոգևոր շահերի շրջանը: Քննելով այն գրական աշխատութիւնները, որոնք սովորաբար կարգացուում են կրթուած ազարակատէրերից կամ բանւորներից,

ես էլ գալիս եմ այն եզրակախութեան, որ Միացեալ Նահանգներում Աստուածաշունչը և քրիստոնէական աստուածաբանութիւնը առաւել ծանրակշիռ հիմք են կազմում ժողովրդի՝ բնութեան, մարդկային գեղի գոյութեան նպատակի վերաբերութեամբ ունեցած հասկացողութեան, քան թէ բողոքականներու պայումս:

Իւրաքանչիւր խոհական մարդու մէջ ակամայից հարց է ծագում, թէ ի՞նչ կը պատահէր մարդկային գեղի հետ, եթէ յանկարծ անյայտանային այն ծանրակշիռ հաւատալիքները՝ որոնք ցայսօր հիմք են ծառայել նրա բարոյականութեան մասին ունեցած հասկացողութիւնների: Կրօնից սրբագործուած բարոյախօսութիւնը ցայսօր ծառայում էր որպէս հիմունք հասարակական կարգերի. իսկ եթէ բարոյականութեան անկման շնորհիւ այդ կարգը խախտուի, արդեօք սրան չի փոխարինիլ կոպիտ ոյժի տիրապետութիւնը: Այս հարցն ըստերևոյթին եւրոպացուն վրդովել չի կարող, որովհետև եւրոպայի բոլոր տեղերում կայ կանոնաւոր զօրք, որը բաւականաչափ ուժեղ է կարգ պահպանելու համար, և այն պատճառով, որ այնտեղ վաղուց արմատացել է գոյութիւն ունեցող իշխանութեանց հնազանդուելու սովորութիւնը: Բայց Ամերիկայում կառավարչական ամբողջ սիստեմը պահպանուում է ոչ թէ զինուած ոյժով, այլ թուական մեծամասնութեան կամքով, որոնք, իրենց շահերի տեսակէտից, կարող է պատահել, որ երբևիցէ կործանեն այդ կառավարութիւնը: Այդ պատճառով երբ դուք նայում էք մարդկանց խմբերին, որոնք Ամերիկայի մեծ քաղաքներում անդադար աշխատում են ապրուստի միջոցներ գտնելու համար, և երբ դուք իւրաքանչիւր քայլափոխում տեսնում էք մի կողմից հարստութեան և աղքատութեան խիստ հակադրութիւնները, երբ մի կողմից աճում է աղքատութիւնը, իսկ միւս կողմից զօրանում է տրամադրութիւն դէպի շաղկապութիւնը, դուք ակամայից սկսում էք մտածել, թէ ի՞նչ վիճակի մէջ կընկնին Միացեալ Նահանգներն, եթէ ազգաբնակչութեան աճման հետ՝ քանդուի

այն հիմքը, որի վրայ կանգուն են ներկայ պետական հաստատութիւնները: Երեակայեցէք, որ մարդիկ, որոնցից կախուած է այդ հիմնարկութիւնների ապագայ գոյութիւնը, կորցնեն հաւատ դէպի Բարձրագոյն էակը և հանդերձեալ կեանքը, կորցնեն իրենց պատասխանատուութեան գիտակցութիւնը՝ շնորհիւ այն համոզման, որ նրանց երկրային կեանքը կը վերջանայ յաւիտենական քնով:

Մի թէ այդ դէպքում կանգուն կը մնայ ներկայ բարոյական կողէկսը և մի թէ նրա հետ միասին չեն անյայտանալ յարգանք դէպի օրէնք, դէպի հասարակութիւն և ապագայ սերունդներն ունեցած պարտաւորութեանց գիտակցութիւնը: Մի թէ այն ժամանակ մարդիկ չեն ղեկավարուիլ այսպիսի կանոնով. «Հոգանք միայն ուտելիքն ու խմելիքը, որովհետև կեանքը կարճ է»: Կամ գուցէ հաստատուած կառավարութեան ձևի քաղաքացիներին խոստացող օգուտների գիտակցութիւնը կը փոխարինի կրօնից ստացուող (սանկցիան) հաստատութիւնը և կը զսպի մարդկային լավերին բռնութիւնից, իսկ մասնաւոր մարդկանց՝ իրենց ետական հակումներին բաւականութիւն տալուց: Պատմութիւնը գրական պատասխան չի տալիս այս հարցերին, բայց դրանից երևում է, որ մինչև ներկայ ժամանակները քաղաքակիրթ ազգերն իրենց համար յենակէտ են գտել կրօնի մէջ և ազատ կառավարութեան ձևը կրօնական ազգերի մէջ տալիս էր ամենալաւ հետեանքներ:

Միացեալ Նահանգներն անկասկած պատկանում են այնպիսի երկիրների թուին, որտեղ իւրաքանչիւր նոր միտք արագութեամբ տարածում է ժողովրդական խաւերում և որտեղ առ Բարձրագոյն էակն ունեցած հաւատոյ խալատումը սոսկալի յեղափոխութիւն առաջ կը բերէր: Բայց Միացեալ Նահանգներն, ըստ երևոյթին Հին Աշխարհից պարսա հաստատուն են պահպանում հին (աւանդները) կարգերը: Մի միայն կրօնական համոզմունքն ու եւանդն էր պատճառը, որ երկու հարիւր յիսուն տարի առաջ Նոր Անգլիայում պատճառ եղաւ այն գաղութները

հիմնելու, որի կարգ ու կանոնն ապագայում մեծ չափով
 իւրացրեց ամբողջ ազգը: Այն օրուանից կրօնն ու խիղճը
 Միացեալ Նահանգներում գործոն բարոյական ոյժ են եղել.
 Թէև նրանք պաշտպանում էին երկիրը բարոյական և քա-
 ղաքական ցաւերից, բայց և կրիտիկաքան ընդհանրին բա-
 ւականաչափ արիւթիւն և եռանդ էին ներշնչում փոքրա-
 մասնութեան՝ կանգնեցնելու այդ ցաւերի զարգացումը,
 իսկ ժամանակի ընթացքումն էլ բուժելու նրանց:

Վաղուց արդէն համոզմունք է դարձել, որ միապե-
 տութիւնները պահպանում են փառքով, իսկ հասարա-
 կապետութիւնները՝ առաքինութեամբ: Հասարակապե-
 տութիւնների մէջ որքան աւելի են զարգանում ռամկա-
 վարական սկզբունքները, ժողովրդական մասսաներ որքան
 աւելի են գիտակցում իրենց ոյժը, այնքան աւելի կա-
 ռեօր է, որ ժողովուրդը չըղեկավարուի միայն հայրենասի-
 րական զգացմունքով, այլ լինի նաև բարեպաշտ (կրօնական)
 և անձնիշխանութեան ընդունակ. այդ պատճառով նրա
 բարեկեցութեան համար կարևոր են և աւելի զին ունին
 այն աղբիւրները, որոնցից բխում են կրօնական զգաց-
 մունքներն և իրեն վրայ իշխելու ընդունակութիւնը:

Միացեալ Նահանգներում իւրաքանչիւր ոք վարում
 է միւսների հետ որպէս հաւասար մարդկանց հետ ան-
 բըռնադատ պարզութեամբ, որը գոյութիւն ունենալ չի
 կարող այն երկիրներում, ուր իրար վրայ նայում են կամ
 բարձրից և կամ ծառայամտութեամբ: Միացեալ Նահանգ-
 ներում հասարակ կոչման տէր մարդիկ երբէք ստրկահո-
 գութիւն չեն արտայայտում: Եթէ երբեմն երևան է գա-
 լիս փոքրինչ կոպտութիւն, որով կարծես ուզում են ասած
 լինել, թէ «մենք էլ ձեզանից ոչնչով վատ չենք», այդ
 գիծը յատուկ է համարեա բացառապէս մի միայն նոր
 գաղթականներին, որոնք գեռ հաւասարութեան միտքը
 չեն իւրացրել: Բարձրաստիճան մարդկանց մէջ այդ զիջող
 ձևն ու եղանակը չի նկատուում. չկայ վարմունքի մէջ այն
 սառն քաղաքավարութիւնը, որը կարելի էր սեփական


արժանապատուութիւնը չբտորացնելու յայտարար ընդու-
 նել: Այդ կարգի մարդիկ, եթէ իրենք չեն ստորացրել
 իրենց անձնական արժանապատուութիւնը, երբէք կարիք
 չունին այն պաշտպանելու: Թէև ձեր կօշկակարն ու բան-
 ւորը ձեզ վերաբերում է իբրև հաւասարի, բայց այդ
 հանգամանքը նրան չի արգելում այն յարգանքը ցոյց
 տալու ձեզ, որը տալիս է ձեր հասարակական դիրքը,
 ձեր կրթութիւնը և ձեր ծագումը:

Վարուեցողութեան այդ անբռնադատութիւնը չա-
 փազանց մեծացնում է հասարակական կեանքի հաճելիու-
 թիւնը: Նա ընդարձակում է բարեկամական կապակցու-
 թեանց չըջանակը, վանելով այն հանդիսաւորութիւնը կամ
 ձեւակնութիւնը, որոնցով Եւրոպայի զանազան դասա-
 կարգերին պատկանող մարդիկ սովորութիւն ունին գործնա-
 կանից զատ՝ ամեն բանի մասին մտքերի փոխանակութիւն
 ունենալ: Նա բարձրացնում է ստորին դասակարգերը՝
 առանց բարձր դասակարգի մարդկանց ստորացնելու,
 նոյն իսկ բարձր դասակարգերն էլ հասարակներից պակաս
 չի լաւացնում, որովհետև նա խլացնում ու ոչնչացնում
 է այն ծածուկ մեծամտութիւնը, որն այնքան փչացնում
 է Եւրոպայի հարուստների և իշխանների ձեւերը: Նա
 կանանց ազատում է այն խորթ և ճնշուած դրութիւնից,
 որի մէջ նրանք ընկնում են Եւրոպայի մեծատուն կանանց
 պահանջների շնորհիւ: Նա ընդարձակում է այդ մարդ-
 կանց համակրանաց չըջանակը և նրանց հնարաւորութիւն
 է տալիս աւելի մօտից ծանօթանալու հասարակական
 միւս դասակարգերին պատկանող անձանց զգացմունքների
 և հայեացքների հետ: Նա ամբողջ ազգի մէջ մեծացնում
 է համերաշխութեան գիտակցութիւնը, ոչնչացնում է փո-
 խադարձ նախանձի և թշնամութեան առիթները, որոնք
 առաջ են բերում ներքին կռիւներ՝ մինչև որ կըլուեն ան-
 ցեալ դարերից ժառանգած ընկերվարական պահանջները
 յեղափոխութեան գաղափարի ազդեցութեան շնորհիւ:
 Ամերիկայի բնիկներից ես երբէք չեմ լսել ցուցումներ

այն անշահաւէտ կողմերի մասին, որոնք կարողանային հակակշիռ լինել թուածս շահաւէտ հանդամանքների:

Բայց ընկերվարական անհաւասարութիւնից, կան հակառակութեան և ուրիշ պատճառներ, որոնց բացակայութիւնը Ամերիկայում իսկոյն աչքի է ընկնում եւրոպացուն: Այստեղ չկան վեճեր եկեղեցիների և կրօնական ազանդների մէջ: Յուդան չի նեղում Եփրեմին, և Եփրեմը չի նախանձում Յուդային: Այստեղ չկայ տիրող եկեղեցի, որը իւր տիրոջ սիրտները բարձունքներից, արքունական թոշակառու, դայրացկոտ հայեացքներ ձգէր այլափառների վրայ և մատնանիշ լինէր նրանց վրայ, որպէս խոչնդոտների, որոնք արգելք են հանդիսանում նրան կատարելու իւր պարտականութիւնը: Այստեղ չկան այլափառներ, որոնք տիրող եկեղեցուն հարկադրուած պէտք է հետևէին կատկածաւ և արթուն աչքով, կամ ժողովրդին քարոզէին վերջ դնելու նրան: Այստեղ ոչ ոքի աչքի չէ ընկնում խաղաղութեան կրօնի տեսական և դործնական մասերի հակասութիւնը, եկեղեցու ամբիսնից քարոզած ընկերութեան և կղերական կատաղի հակառակութիւնները: Այստեղ քրիստոնեաների և ոչ քրիստոնեաների մէջ չկայ այն առեկտիւնը, որը Յրանսիայում մտցնում է բաժանումն թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքում: Այստեղ զանազան ազանդների մրցութիւնը արտայայտւում է ամենաանմեղ ձևով — նոր եկեղեցիներ կառուցանելու և քարոզչական դործունէութեան համար դրամ ժողովելու մէջ: մինչդեռ բողոքական բոլոր ազանդները և նրանցից չորս ամենատարածուածներն էլ բարեգործութեան մէջ միշտ օգնում են իրար: Կաթոլիկների և բողոքականների մէջ չկայ ուժեղ թշնամութիւն, մարդասիրական ձեռնարկութեանց միջոցին նրանք երբեմն օգնում են իրար: Այստեղ սկեպտիկները հասարակութիւնից վանտուած չեն համարուում, իսկ քրիստոնէական էութեան մասին վեճերը տեղի ունին աւելի վայելուչ եղանակով: Ուրիշ ոչ մի երկրում Յրիդրիկոս Մեծի օրէնքը

«Իւրաքանչիւրը կարող է փրկուիլ իւր ուղած ձևով» այն պիտի ամբողջութեամբ չի դործագրուում, ինչպէս Ամերիկայում: Կրօնական այդ խաղաղասիրութիւնն ու ազատութիւնը զարմանալի հանգստացուցիչ տպաւորութիւն է թողնում իւր ընտանեկան կրօնական վեճերից ձանձրացած եւրոպացու վրայ և մեծ չափով նպաստում են հասարակ ժողովրդի առօրեայ կեանքի հաճելիութեան:



ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ:


Այն դերը, որը կատարում է ամերիկական հոգևորականութիւնը ընտրութիւնների ժամանակ, կարող է շատ ընտրող ապացոյց լինել ամերիկացուց հասարակական բարքերի: 1820 ից—1856 թուականների շրջանում հոգևորականութիւնն առ հասարակ աշխատում էր իրեն չեզոք պահել ընտրական դործերին միջամտելուց, ոչ թէ միայն նրա համար, որ որևէ թեկնածուի կողմն անցնելով, նա կարող էր գոգոհութիւն յարուցանել իրեն ծխականներից մի քանիսի մէջ, այլ և նրա համար, որ հասարակական կարծիքը գատապարտում էր հոգևորականների այդ տեսակ մասնակցութիւնը և քաղաքականութեան խառնուրդը գտնում էր հոգևոր կոչման անհամապատասխան: Բայց ստրկութեան դէմ սկսած կռիւը, որը մղուեց բարոյական նպատակով, հետզհետէ սկսաւ հոգևորականներին էլ քաշել քաղաքական ասպարէզ: Երբ որ վերջացաւ ներքին կռիւը, հոգևորականութիւնը նորից աշխատեց միանգամայն չեզոք դիրք բռնել քաղաքական դործերի վերաբերութեամբ: Բայց մտքերի այն յուզուած ժամանակ, որը սովորաբար առաջ է դալիս հասարակապետութեան նախագահի ընտրութիւնից առաջ, նրանց հար-

կազմում է մի կողմ թողնել ընդունուած կանոնները։ Այդ պատճառով երբեմն պատահում է, որ այս կամ այն թեկնածուի ընտրութիւնը, որը շօշափում է հասարակութեան բարոյական շահերը, բաւարար չարժաւիթ է համարում հոգևորականութեան միջամտութեան համար։ 1884 թուի ընտրական պայքարի ժամանակ հոգևորականներն յաճախ իրենց վրայ նշանաւոր դեր էին վերցնում։ Ամիսների ընթացքում լրագիրները լեցուն էին հոգևորականների կարծիքներով։ Եթէ հոգևորականի քարոզը կարող էր որ և է ազդեցութիւն ունենալ ընտրութեան ելքի վրայ, իսկոյն լրագիրները հաղորդում էին նրա բովանդակութիւնը հասարակութեան։ Լոյս էին տեսնում լրագրական նկատողութիւններ, որոնց մէջ աւելում էր, որ այս ինչ պատուրի օրինակին հետեւելով՝ ձայն է տալու նաև նրա ծխականների երեք քառորդ մասը. իսկ ընդհակառակն՝ այն պատուրը, որը գնաց միտտինգի, պաշտպանեց և ձայն տուեց հակառակ կուսակցութեան թեկնածուին, առաջ բերեց իւր ծխականների դժգոհութիւնը։ Ներկայումս քիչ է պատահում, որ հոգևորականները բարձրանան ճառախօսների ամբիսնը։ Սակայն վախճանուած Հէնրի Ուորդ Բիչեր պատուրը ընտրութեանց նախապատրաստութիւնների ժամանակ արտասանած ճառով այն կուսակցութեան թեկնածուի դէմ, որին ինքը պատկանում էր ամբողջ կեանքի ընթացքում, շատ մեծ տպաւորութիւն թողեց ¹⁾։ Նոյն թեկնածուի ընտրութեան նախապատրաստութեան միջոցին պատահեց հետեւեալ դէպքը. — ամեն դաւանութեանց պատկանող 1018 հոգևորականները (հրէից բաբունու հետ) հաւաքուեցին Նիւ-Իօրկի հիւրանոցներից մինը յիշեալ թեկնածուին հանդիպելու և

¹⁾ Բիչերի քաղաքական հայեացքները այդ փոփոխութիւնը հասարակական կարծիքով այնպիսի նշանաւոր ազդեցութիւն ունեցաւ, որ ծխականներից մի քանիսը հարկադրուեցին հրապարակաւ յայտարարել, որ երենք պատուրին չեն հնազանդում։

յայտնեցին իրեն, որ կը պաշտպանեն նրան բարոյական պատճառներով։

Ահա այսպէս է հոգևորականութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներում, այդքան նախանձելի կացութիւն ունի քրիստոնէական կրօնը իւր բոլոր բաժանումներով այդ ազատ երկրում և եռանդով շարունակելով Աւետարանի սիրոյ և խաղաղութեան քարոզը, երբէք ոչ ոքի կողմից հալածանքի և կասկածի չի ենթարկում։



[Faint, illegible handwriting, likely bleed-through from the reverse side of the page.]

[Extremely faint, illegible handwriting covering the lower portion of the page, possibly bleed-through.]





« Ազգային գրադարան »

NL0181230

